# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

39ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 14 (1914) ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 13, 2019
VOLUME 39, NO. 14 (1914) SATURDAY APRIL 13, 2019

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Փաշինեան. «Ես Բանակցութիւնները Սկսած Եմ Ոչ Թէ Սերժ Սարգսեանի, Այլ Իմ Սեփական Կէտէն»

*«Մենք չենք պատրաստւում որեւէ մէկի դէմ ռազմական գործողութիւն սկսել, բայց եթէ որեւէ մէկը մեր դէմ ռազմական գործողութիւն սկսի, մենք նրան պարտադրելու ենք խաղաղութիւն», - Ազգային ժողովէն ներս՝ լրագրողներու հետ ճեպազրոյցի ժամանակ յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեան:*

*«Պէտք չի ամէն բանակցային գործընթացից առաջ, յետոյ խօսել պատերազմի մասին: Երբ որ մենք խօսում ենք պատերազմի մասին, մենք դրանով շեշտում ենք բանակցային գործընթացի կարեւորութիւնը եւ մեր հաւատարմութիւնը բանակցային գործընթացին», - ըսած էՓաշինեան:*

*Հարցին, թէ բանակցութիւնները երաշխիք կու տա՞ն, որ Ատրպէյճանը չի փորձեր դիմել պատերազմական գործողութիւններու, Փաշինեանը պատասխանած է. - «Կողմերը՝ յղում անելով Տուշանպէի պայմանաւորուածութիւններին, պայմանաւորուել են պահպանել եւ ուժեղացնել հրադադարի ռեժիմը, սա մեր պայմանաւորուածութիւնն է, սա մեր քաղաքական պայմանաւորուածութիւնն է: Կա՞յ հնարաւորութիւն, որ մենք դրժենք էս քաղաքական պայմանաւորուածութիւնը, ո՛չ, էդպիսի հնարաւորութիւն չկայ, բայց եթէ յանկարծ որեւէ մէկը դրժի այդ քաղաքական պայմանաւորուածութիւնը, դա չի նշանակում, թէ մենք չենք պաշտպանուելու, եւ յոյս ունեմ, որ Ատրպէյճանի իմ գործընկերը չի դրժի էդ պայմանաւորուածութիւնը: Մենք շատ յստակ պայմանաւորուել ենք եւ գրաւոր էդ պայմանաւորուածութիւնն արձանագրել ենք եւ գրաւոր այդ պայմանաւորուածութիւնն արձանագրուած է նաեւ Մինսքի խմբի համանախագահների ներկայութեամբ եւ ստորագրութեամբ, խօսքը դրա մասին է, բայց մեր սկզբունքների մէջ ի՞նչն է, որ նաեւ ոչ միայն ուժ չկիրառել, այլեւ ուժի կիրառման սպառնալիք չկիրառել, եւ մենք ընդամէնը բոլորի ուշադրութիւնն ենք հրաւիրում այն փաստի վրայ, որ, ցաւօք սրտի, Ատրպէյճանը ժամանակ առ ժամանակ ուժի կիրառման սպառնալիքը որպէս բանակցային գործօն փորձում է օգտագործել»:*

*«Ազատութեան» հարցին, թէ-բանակցութիւնները սկսած է ա՞յն կէտէն, որ կէտէն որ կանգ առած է Սերժ Սարգսեանը, Փաշինեանը պատասխանած է. - «Ո՛չ, ես այդ կէտից չեմ սկսել, ես բանակցութիւնները սկսել եմ ոչ թէ Սերժ Սարգսեանի կէտից, այլ իմ սեփական կէտից, սա կարեւոր նրբութիւն է»:*

## Ներկայութեամբ Տիկ. Աննա Յակոբեանի Բացառիկ Շուքով Նշուեցաւ Լոս Անճելոսի Հայաստանի Հիւպատոսարանի Հիմնադրութեան 25-Ամեակը



Լոս Անճելոսի ՀՀ աւագ հիւպատոսութեան հիմնադրութեան 25-ամեակի տօնակատարութեան սրահը՝ Տիկ. Յակոբեանի ելոյթի ընթացքին

*Պատմական ճաշկերոյթ-հանդիսութեամբ մը նշուեցաւ Լոս Անճելոսի Հայաստաստանի Հանրապետութեան աւագ հիւպատոսութեան հիմնադրութեան 25-ամեակը, որ տեղի ունեցաւ Կիրակի, 7 Ապրիլ, 2019, Կլենտէյլի Հիլթըն պանդոկին մէջ:*

*Արծաթեայ յօբելինական տօնակատարութեան գլխաւոր հիւրն էր ազնուափայլ Տիկ. Աննա Յակոբեան, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի կինը:*

*Աւելի քան 600 հանդիսականներուն մէջ կը նշմարուէին մեր գաղութի կրօնական, քաղաքական, մշակութային եւ ընկերային տարբեր կազմակերպութեանց ղեկավարներ, պետական, քաղաքապետութեանց ներկայացուցիչներ, հիւպատոսներ, լրագրողներ եւ բարերարներ:*

*Տիկին Աննա Յակոբեանի եւ ընկերակցող շքախումբի անդամներու սրահ մուտքը դիմաւորուեցաւ խանդավառ եւ յոտնկայս ծափահարութիւններով:*

*Հայաստանի ու ԱՄՆ-ի քայլերգներու կատարումէն եւ սեղաններու օրհնութենէն ետք գործադրուեցաւ պատշաճ յայտագիր մը, հանդիսավարութեամբ Գալիֆոռնիոյ Գերագոյն ատեանի դատաւոր Արմենուհի (Amy) Աղվանեանի: Ան իրեն համար մեծ պատիւ համարեց նման միջոցառումի մը ատենավար ըլլալը:*

*Իր բացման խօսքին մէջ Հայաստանի աւագ հիւպատոս եւ դեսպան դոկտ. Արմէն Բայբուրդեան սրտանց ողջունեց ներկայ հասարակութիւնն ու օրուան հիւրերը: Ան իր անսահման ուրախութիւնը*

Շար.ը էջ 5

## Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Ներկայացուցիչներու Հանդիպումը Դեսպան Վահագն Մելիքեանի Հետ



ՍԴՀԿ ներկայացուցիչները դեսպան Վահագն Մելիքեանի եւ հիւպատոս Արմէն Պայպուրթեանի հետ

*Երեքշաբթի, Ապրիլ 9-ին, ՍԴՀԿ Կլէնտէլի գրասենեակը այցելեց Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութեան գլխաւոր քարտուղար դեսպան Վահագն Մելիքեան: Անոր կ'ընկերակցէին Լոս Անճելըսի մէջ ՀՀ գլխաւոր հիւպատոս դոկտ. Արմէն Բայբուրդեան եւ խորհրդական Պր. Վարագդատ Պահլաւունի: Հիւրերը ընդունուեցան Կուսակցութեան ներկայացուցիչներուն կողմէ, գլխաւորութեամբ՝ ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան ատենապետ Տոքթ. Համբիկ Սարաֆեանի:*

*Հանդիպման ընթացքին դեսպան Մելիքեան անդրադարձաւ Հայկական սփիւռքի ներուժը համախմբելու ու զայն ի սպաս Հայաստանի պետականութեան ամրապնդման ուղղելու կարեւորութեան: Ան նաեւ ներկայացուց Հայաստան-ԱՄՆ, Հայաստան-Ռուսաստան եւ Հայաստան-Իրան յարաբերութիւններու վերջին զարգացումները: Դեսպանը շեշտեց, որ Հայաստան ներկայիս կը վարէ իր ուրոյն արտաքին քաղաքականու-*

Շար.ը էջ 5

## Աւելի Քան 70 Գոնկրեսականներ Միացած Են Հայոց Ցեղասպանութեան Բանաձեւին

*ԱՄՆ Գոնկրեսի Ներկայացուցիչներու պալատի աւելի քան 70 անդամներ միացած են Գոնկրեսականներ՝ Ատամ Շիֆի եւ Կուս Պիլիրաքիսի՝ Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ նոր բանաձեւ ներկայացնելու նախաձեռնութեան:*

*Նախագիծը միտուած է Հայոց ցեղասպանութեան հերքումը մերժելուն, ԱՄՆ կառավարութեան կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչմանն ու յիշատակման, Հայոց ցեղասպանութեան մասին իրազեկուածութեան բարձրացման կարեւորութեան, նմանատիպ յանցագործութիւնները յետագային կանխելու առումով:*

*«Աւելի քան 100 տարի առաջ Օսմանեան Կայսրութիւնը հայ ժողովուրդի դէմ իրականացուցած է սպանութիւններու, բռնութիւններու ու տեղահանման դաժան արշաւ: 20-րդ դարու առաջին Ցեղաս-պանութիւնը խլած է 1,5 միլիոն մարդու կեանք: Ցեղասպանութիւնը անցեալի մասնիկ չէ, այլ միշտ գոյութիւն ունեցող սպառնալիք: Ցեղասպանութեան ժխտումը ոչ միայն կը շարունակէ վնաս հասցնել վերապրածներուն, այլ աւելի հաւանական կը դարձնէ անոր կրկնութիւնը այլ ժողովուրդներու նկատմամբ»,- ըսած է Ատամ Շիֆ:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Հայաստանն Ատրպէյճանին Ստիպել է Բացուել

ԱՐԱՄ ԱՄԱՏՈՒՆԻ

*Ատրպէյճանն արձագանքելով Հայաստանի պաշտպանութեան նախարարի յայտարարութեանը, որ Պաքուն իր բանակը պէտք է պատրաստի խաղաղութեան, յայտարարել է, թէ ատրպէյճանական բանակը ոչ թէ խաղաղութեան է պատրաստ, այլ պատերազմի: Այս արձագանքի համատեքստում նախ ուշադրութեան է արժանի, թերեւս, հայկական դիւանագիտաքարոզչական մարտավարութեան մի նուրբ ասպեկտ, երբ Երեւանը սկսել է խօսել խաղաղութեան եւ խաղաղութիւն պարտադրելու «կոմբինացիոն» համատեքստում, այսինքն՝ մի կողմից զգալիօրէն աւելացրել է խաղաղութեան հռետորաբանութիւնը եւ տեղաւորում է այն ընդհանուր շահի համատեքստում, միւս կողմից՝ դա զուգորդում է պաշտպանական ռազմավարութիւնը յարձակողականի փոխելու աշխոյժ հռետորաբանութեամբ: Դրա արդիւնքում Պաքուն յայտնւում է բաւականին անյարմար դրութեան մէջ: Իհարկէ, միամտութիւն է ասել, թէ դա, այսպէս ասած, ճակատագրական դրութիւն է Պաքուի համար, սակայն միւս կողմից՝ Պաքուն փաստօրէն ստիպուած է լինելու կամ խօսել հայկական տրամաբանութեամբ, կամ պատերազմի մասին ստիպուած խօսել խաղաղութեան աւելի ընդգծուած մերժումով:*

*Իսկ եթէ հաշուի առնենք եւ այն, որ հայկական կողմն իր խաղաղութեան ասպեկտների վրայ կառուցած հռետորաբանութիւնը նրբօրէն ուղղում է աւելի շատ ատրպէյճանական հանրութեանը, իշխանութեանը թողնելով պաշտպանականից յարձակողական ռազմավարութեան անցնելու եւ խաղաղութիւն պարտադրելու մեսիջները, ապա փաստացի ստացւում է, որ Պաքուն սկսում է հակառակ հայկական կողմի խաղաղութեան առաջարկի պատերազմ առաջարկել թէ՛ միջազգային, թէ՛ իր հանրութեանը: Այստեղ յարաբերակցութիւնը ամենեւին նոր չէ, այսինքն՝ հայկական կողմը միշտ էլ եղել է խաղաղութեան առաջարկողը եւ պահպանողը, իսկ Ատրպէյճանը՝ պատերազմի: Նորը տուեալ դէպքում շեշտադրումների հղկումներն ու նրբացումներն են, որոնք Պաքուին ստիպում են այլեւս աւելի ընդգծուած քարոզել պատերազմ եւ փաստացի յայտնուել պատերազմի արդէն ինքնանպատակ քարոզի դիրքերում, կամ ստիպել է բացուել այդ դիրքերում: Աւելի լայն առումով, այստեղ, անշուշտ, ուշադրութեան է արժանի նաեւ մէկ այլ հանգամանք: Պատերազմի կամ խաղաղութեան պատրաստ են լինում ոչ թէ բանակները, կամ խաղաղութիւն պարտադրելու, այլ պետութիւնները, այսինքն՝ համակարգերը: Բանակները դրանց մասն են: Այն, որ մեր բանակը պատրաստ է սխրանքի, ընդ որում ոչ միայն ոգեղէնութեան, այլ նաեւ զուտ մարտական կարողութիւնների ու ունակութիւնների շնորհիւ, աներկբայ է, դա ապացուցել է բանակի թէ՛ առաջին սերունդը, թէ՛ նոր սերունդը 2016-ին:*

*Այդ իմաստով պաշտպանութեան նախարարի յայտարարութիւնները, նաեւ դրանց քաղաքական հաւանութիւնը տուող վարչապետի յայտարարութիւնները հիմնաւոր են, նաեւ կարեւոր ընդհանուր պետական քաղաքականութեան տեսանկիւնից: Սակայն այդ ամէնը, իհարկէ, ոչ թէ հակադրւում է, այլ պէտք է փոխլրացուի ընդհանուր պետական կարողութիւնների հետեւողական ընդլայնումով եւ բարձրացումով, քանի որ պատրաստ է խաղաղութիւն պարտադրելուն կամ ամբողջ օրգանիզմը, կամ խիստ սահմանափակ է լինելու մէկ օրգանի կարողութիւնների էֆեկտը, որովհետեւ այն չի կարող շատ երկար ժամանակ իր վրայ կրել միւս չաշխատող օրգանների ծանրաբեռնուածութիւնը: Իսկ այդ առումով աներկբայ է, որ չնայած թաւշեայ յեղափոխութեամբ իրավիճակի էական, հիմնարար փոփոխութեանը, այդ թւում՝ պետական քաղաքականութեան ամբողջ սպեկտրի առաւել հաւասարակշռման տեսանկիւնից, այդուհանդերձ, օրգանների աշխատանքի «բաշխուածութիւնը»՝ էֆեկտիւութեան տեսանկիւնից, դեռեւս մնում է անհամաչափութեան ռեժիմում, որն ունի հնարաւորինս արագ ինստիտուցիոնալ կերպով հաւասարակշռուելու անհրաժեշտութիւն:*

*«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»*

# Սերժ Սարգսեանը Կը Փորձի Ապացուցել «Եթէ Մենք Վատն Էինք, Ապա Նորերը Մեզանից Բեթար Են» Թեզը

*Ինչպէս որ մարդն անսխալական չէ, այնպէս էլ գաղափարի շուրջ հաւաքուած բազմաթիւ սխալական մարդկանց խմբաւորումը՝ կուսակցութիւնը: Մահաթմա Գանդին յայտնի խօսք ունի. «Ազատութիւնը ոչինչ չարժէ, եթէ չի ներառում նաեւ սխալուելու ազատութիւնը»:*

*Առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանն, օրինակ, երբ 1998թ.-ին հեռացաւ նախագահի պաշտօնից, իր հրաժարականի ելոյթը եզրափակեց «Եթէ արել եմ ինչ-որ լաւ բան, չեմ ակնկալում որեւէ երախտագիտութիւն, չարածիս ու սխալներիս համար հայցում եմ ձեր ներողամտութիւնը» տողով: Նա շուրջ 10 տարի հաշուած անգամներ է մասնակցել հանրային որեւէ միջոցառման եւ մինչեւ 2007թ.-ի աշուն, երբ տրուեց բազմամարդ հանրահաւաքների մեկնարկը, եւ ձեւաւորուեց ՀԱԿ-ը, հաշուած անգամներ է մասնակցել հանրային որեւէ միջոցառման՝ պահելով «լռութեան ուխտը»: Կասկածում ենք, որ խոհեմ քաղաքական գործչի համբաւ ունեցող առաջին նախագահը կը վերադառնար քաղաքականութիւն, եթէ վստահ չլինէր, որ հասունացել է իր վերադարձի հանրային պահանջը:*

*Երբ մէկ տարի առաջ հրաժարական տուած ՀՀԿ նախագահ եւ վարչապետ Սերժ Սարգսեանը յայտարարեց իր ամենայայտնի ֆրազը՝ «ճիշտ էր Նիկոլ Փաշինեանը, ես սխալուեցի», նրա այս խօսքերը հենց իրենք՝ ՀՀԿ-ականները, որպէս պետականամէտ ու խոհեմ գործչի քայլ որակեցին՝ նկատի ունենալով «Մարտի 1»-ը չկրկնելու, իշխանութիւնը ուժով ու արեամբ չպահելու որոշումը: Ճուտով կը լրանայ խոհեմութեան «մաստեր կլասս»-ի հեղինակի հրաժարականի մէկ տարին, եւ ինչպէս օրերս ազդարարեց Արմէն Աշոտեանը, մօտենում է Սերժ Սարգսեանի խօսելու ժամանակը՝ կուտակուած հարցերին տրուելիք կուտակուած ասելիքով: Բայց այստեղ կարեւոր է մէկ այլ հարց. կա՞յ Սերժ Սարգսեանի ելոյթի կամ որեւէ ֆորմատով հանդէս գալու հանրային պահանջը, արդեօք հասարակութիւնն անցած մէկ տարուայ ընթացքում հասցրե՞լ է ներել նախկին իշխանութեան՝ 10 եւ աւելի տարիների կառավարման սխալներն ու բացթողումները, եւ ի՞նչ նոր ու դարակազմիկ խօսք պէտք է ասի նախկին նախագահը, որպէսզի կարողանայ «իւղել» հասարակութեան սիրտը եւ միաժամանակ «դաղել» նոր իշխանութեան մատները:*

*Իհարկէ, այս ողջ ընթացքում ՀՀԿ-ի երիտթեւը, մոռանալով կամ չտեսնելու տալով սեփական աչքի գերանները, զբաղուած է իշխանութեան աչքերում գերաններ փնտռելու եւ «սիրուց կուրացած» հասարակութեան աչքերը այդ «գերանների» վրայ բացելու գործով, որի ակնյայտ նպատակը ռեւանշի հասնելն է, ոչ այնքան պետութեան նկատմամբ սրտացաւութիւնը, որքան «եթէ մենք վատն էինք, ապա նորերը մեզանից բեթար են» թեզն ապացուցելը: Երեւի հենց այս՝ դեռեւս չապացուցուած թեզի շուրջ էլ լինելու է Սարգսեանի յառաջիկայ ելոյթը:*

*«ԺՈՂՈՎՈՒՐԴ»*

# Ազգային Արժէքների Առաջնահերթութիւնները

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

*Հայաստանի քաղաքացին ԱԺ ամպիոնից խօսում է իր իրաւունքներից, իր խմբի դէմ բռնութիւններ կիրառելու մասին, խտրականութեան դէմ: Էլ որտե՞ղ պէտք է խօսուի դրա մասին, եթէ ոչ խորհրդարանական լսումների ժամանակ՝ մանաւանդ հաշուի առնելով, որ Հայաստանը խորհրդարանական հանրապետութիւն է: Մեր բոլոր քաղաքացիների իրաւունքները, կեանքը, անվտանգութիւնը պէտք է պաշտպանուած լինի՝ անկախ այդ քաղաքացիների առանձնայատկութիւնից: Այս, իմ կարծիքով, չափազանց ակնյայտ ճշմարտութեան դէմ բերւում է հետեւեալ «փաստարկը»՝ ի՞նչ է, պէ՞տք չէ պաշտպանել մեր ազգային արժէքները: Համոզուած եմ, որ պէտք է, անհրաժեշտ է:*

*Սակայն ամէն մէկն ունի ազգային արժէքների իր առաջնահերթութիւնները: Ինձ համար կարեւորագոյն արժէքներից է հայկական պետութիւնն իր Սահմանադրութեամբ, որի 29-ը յօդուածում գրուած է. «Խտրականութիւնը, կախուած սեռից, ռասայից, մաշկի գոյնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական յատկանիշներից, լեզուից, կրօնից, աշխարհայեացքից, քաղաքական կամ այլ հայեացքներից, ազգային փոքրամասնութեանը պատկանելութիւնից, գոյքային վիճակից, ծնունդից, հաշմանդամութիւնից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնոյթի այլ հանգամանքներից, արգելւում է»:*

*Ինձ համար կարեւոր ազգային արժէք է հայոց լեզուն եւ հայոց այբուբենը, որը Մեսրոպ Մաշտոցի հանճարեղ մտայղացմամբ եւ, բնականաբար, ոչ պատահաբար տարբերւում է աշխարհի բոլոր մնացած այբուբեններից: Ինձ համար ազգային արժէք են Հայաստանի բոլոր քաղաքացիները, առաջին հերթին՝ նրանք, ովքեր այս 28 տարում, ի հեճուկս դժուարութիւնների, ապրել են հայրենիքում: Ես յարգանքով եմ վերաբերւում Հայաստանից գնացած իմ հայրենակիցներին, բայց երբ նրանք հեռուից համացանցում պաշտպանում են նրանց տեսակէտն ինձ այնքան էլ համոզիչ չի թւում:*

*Ինձ դո՞ւր է գալիս տրանսգենդերների կամ միասեռականների ապրելաոճը: Խոստովանեմ՝ ոչ: Բայց ինձ դուր չեն գալիս նաեւ «Եհովայի վկաների» կրօնական համոզմունքները կամ այսպէս կոչուած՝ «աթեիստների» անհաւատութիւնը: Ինձ դուր չեն գալիս շատ-շատ մարդկանց քաղաքական համոզմունքները: Բայց դա իմ անձնական մօտեցումն է, ու ես իրաւունք չունեմ դատաւորի դեր ստանձնելու: Առաւել եւս՝ ոչ մէկս իրաւունք չունի այս տեսակի տարաձայնութիւնների պատճառով մարդկանց հետապնդելու, նրանց նկատմամբ բռնութիւն գործադրելու, բռնութեան կոչ անելու, խտրական վերաբերմունք ցուցաբերելու:*

*Ի դէպ, ինձ դուր չի գալիս, որ Հայաստանում կան մարդիկ, որոնք ԱԺ-ի այս վերջին միջադէպի հարցում ինձ հետ համաձայն են, բայց, իրենց «ընդդիմադիր հայեացքներից» ելնելով, ձեւացնում են, թէ իբր զայրացած են ԱԺ ամբիոնի «պղծմամբ»:*

*«ԱՌԱՒՕՏ»*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
*http://www.massisweekly.com*

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# Սասուն Միքայէլեան Ընտրուած է ԵԿՄ Վարչութեան Նախագահ

«Երկրապահ կամաւորականներու միութիւն» հասարակական կազմակերպութեան 12-րդ արտահերթ համագումարին վարչութեան նախագահի պաշտօնին միաձայն ընտրուած է «Սասուն» կամաւորական ջոկատի հրամանատար, ԱԺ պատգամաւոր Սասուն Միքայէլեանը:



ԵԿՄ նորընտիր նախագահ Սասուն Միքայէլեան ելոյթ կ'ունենայ համագումարի բեմէն

Համագումարին ներկայ եղած է նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինեան, որ ելոյթին մէջ անդրադարձած է նաեւ Ղարաբաղի հարցին՝ շեշտելով, որ Հայաստանը հակամարտութեան կարգաւորման ձեւաչափի ոչ թէ փոփոխութիւն, այլ վերականգնում կ'առաջարկէ:

Ըստ Փաշինեանի, պէտք է յստակութիւն մտցուի Մատրիտեան սկզբունքներու նշանակութեան հարցին եւս, որպէսզի ինք կարողանայ յստակեցնել, թէ որքանով այդ սկզբունքները ընդունելի են կամ, առհասարակ, ընդունելի՞ են, թէ՞՝ ոչ հայկական կողմի համար:

«Ուզում եմ յստակ արձանագրել, որ Հայաստանի կառավարութիւնը, Հայաստանը Ղարաբաղի հարցի բանակցային ձեւաչափի փոփոխութեան հարց երբեւէ չի դրել: Հայաստանի կառավարութիւնը դրել է բանակցային ձեւաչափի վերականգնման հարց: Այն, որ Ղարաբաղի հարցի բանակցութիւնները պէտք է տեղի ունենան ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահութեան ձեւաչափով, մենք երբեք՝ ոչ մի վայրկեան, կասկածի տակ չենք դրել:

Իսկ ԵԱՀԿ Մինսքի խմբի ձեւաչափն իր ձեւաւորման առաջին իսկ րոպէներից ենթադրել եւ ներառել է Լեռնային Ղարաբաղի ընտրուած ներկայացուցիչների մասնակցութիւնը բանակցային գործընթացին: Եւ բանակցային ողջ գործընթացի ընթացքում, թոյլ տուէք ասել, Լեռնային Ղարաբաղը ներկայ է եղել, եւ դա արտայայտուել է ոչ միայն մինչեւ 1998 թուականը, այլեւ 1998 թուականից յետոյ, որովհետեւ եկէք ուղիղ նայենք փաստերին եւ ասենք՝ 1998 թուականից յետոյ Հայաստանի Հանրապետութիւնը բանակցային սեղանի շուրջ ներկայացնող Ռոպերթ Քոչարեանը եւ Սերժ Սարգսեանը, ըստ էութեան, ներկայացրել են նաեւ Ղարաբաղը, եւ նրանք եղել են Ղարաբաղի ուղիղ ընտրուած ներկայացուցիչ եւ այս իմաստով ունեցել են լիարժէք մանտաթ»,- յայտարարած է վարչապետը:

Փաշինեանը ելոյթը եզրափակած է հետեւեալ ուղերձով՝ Հայաստանի եւ Արցախի հետ պէտք չէ խօսիլ պատերազմի սպառնալիքով:

«Մեզ պէտք չէ ընդհանրապէս սպառնալ պատերազմով: Պատերազմի սպառնալիքին մենք պատասխանելու ենք խաղաղութեան օրակարգով, անհրաժեշտութեան դէպքում՝ խաղաղութիւնը պարտադրելու օրակարգով», - ըսած է վարչապետը:

# Ապրիլեան Քառօրեայ Պատերազմի Զոհերուն թիւը 75 է.Արծրուն Յովհաննիսեան

Շատ կարեւոր է յստակեցնել Ապրիլի 4 օրուան ընթացք եւ յետագայ ընթացք հասկացութիւնները: Այս մասին Tert.am-ի հետ զրոյցի ժամանակ ըսած է ՀՀ Պաշտպանութեան նախարարութեան մամուլի խօսնակ Արծրուն Յովհաննիսեանը՝ անդրադառնալով հարցին, թէ ի վերջոյ 2016 թուականի Ապրիլեան քառօրեայ պատերազմի ժամանակ քանի կորուստ ունեցած է հայկական զինուած ուժերը:



ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան մամուլի խօսնակ Արծրուն Յովհաննիսեան

«Զոհերի թիւը նշելիս պէտք է ֆիքսուել առաջին 4 օրուայ վրայ, որովհետեւ մարտերի ծանրութիւնը եղել է 4 օրուայ ընթացքում: Եթէ մենք յետագայ օրերի կորուստները սկսենք հաշուել, այդպէս կարող ենք հաշուել ամբողջ տարուայ կորուստները:

Դրա համար, եթէ ասում ենք ապրիլեան զոհեր, ճիշդ կը լինի ֆիքսուենք առաջին 4 օրուայ վրայ, իսկ եթէ 4 օրուայ կորուստներն ենք ֆիքսում, ապա 4 օրուայ կորուստը կազմում է 75 մարդ՝ 61 զինծառայող, ուզում եմ կարեւորել, որ նրանցից կէսը սպաներ են եղել, 12 աշխարհազօրային, 2 պահեստազօրային: Աշխարհազօրայինն ու պահեստազօրայինը զինծառայողներ չեն, բայց գալիս էին, որ մտնեն զինծառայութեան մէջ, բայց շատերը չէին էլ հասցրել մտնել ծառայութեան մէջ»,- ըսած է ան եւ աւելցուցած, որ ունեցած ենք նաեւ 4 քաղաքացիական զոհ՝ մէկ երեխայ եւ երեք ծերունի: Արծրուն Յովհաննիսեանը կոչ ըրած է, որ մարդիկ քիչ մը զուսպ ըլլան մարդկային կեանքերու, զոհերու մասին արտայայտուելու ժամանակ: «Ասում են՝ հարիւրաւոր զոհեր են եղել, չի կարելի այդպէս»,- նշած է ան:

# «Ոչ Մէկ Կաշառակեր Պաշտօնեայ Չի Կրնար Գիշերը Հանգիստ Քնանալ». Փաշինեան

Հարկաւոր է, որ կաշառակերութիւնը իսպառ վերանայ դատական համակարգէն, Բարձրագոյն դատական խորհուրդի (ԲԴԽ) տարեդարձի միջոցառման ժամանակ յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Վարչապետը ընդգծած է՝ այսօր պատմական առիթ կայ Հայաստանի մէջ իսկապէս ունենալ անկախ դատական համակարգ, եւ այսօր չկայ որեւէ քաղաքական խոչընդոտ այդ գործընթացը արգելակելու համար:

«Հայաստանի կառավարութիւնը հրաժարուել է այն գործելակերպից, երբ քաղաքական իշխանութիւնը, գործադիր իշխանութիւնը փորձում է որոշումներ պարտադրել, կամ միջամտել դատական իշխանութեան եւ համակարգի գործունէութեանը, սա շատ կարեւոր արձանագրում է, եւ ես ուզում եմ, որ մենք բոլորս այս արձանագրմանը շատ լուրջ վերաբերուենք: Եթէ անգամ իշխանութեան տարբեր օղակներից գտնուեն մարդիկ, պաշտօնեաներ, օղակներ, ովքեր կը գործեն կամ կը փորձեն գործել այս տրամաբանութիւնից դուրս, նրանք ուրեմն գործում են Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան դէմ եւ Հայաստանի Հանրապետութեան ժողովրդի դէմ», - ըսած է Փաշինեանը՝ շարունակելով. - «Շատ կարեւոր է, որ դատական համակարգն ի վիճակի լինի օգտուել այս համակարգից, սրա համար հարկաւոր է, որ Հայաստանում լինեն դատաւորներ, ովքեր պատրաստ են իրենց վրայ վերցնել այդ պատասխանատուութիւնը եւ պատրաստ են գործել օրինականութեան, արդարութեան, իրաւունքի շրջանակներում, եւ այս իրավիճակն ապահովելու համար մեզ հարկաւոր է նաեւ երկրորդ պայմանը, որ դատական համակարգից իսպառ վերանայ նաեւ կաշառակերութիւնը»:

Փաշինեանը ընդգծած է՝ Հայաստանի մէջ ոչ մէկ կաշառակեր պաշտօնեայ չի կրնար գիշերը հանգիստ քնանալ:

«Անկախ նրանից՝ դատաւոր է, նախարար է, որեւէ մակարդակի կաշառակեր պաշտօնեայ չի կարող հանգիստ քնել, նա պէտք է իմանայ, որ արդարութիւնը, արդարադատութիւնը, պայմանականօրէն ասած, ժողովուրդն անպայման գալու է իր յետեւից: Այսօր մենք պատմական առիթ ունենք Հայաստանում իսկապէս ունենալ անկախ դատական համակարգ: Այսօր չունենք որեւէ քաղաքական խոչընդոտ այդ գործընթացը արգելակելու համար», - ըսած է վարչապետը:

# «Դուխով Հայաստան Բաց Հասարակութիւն» Էջը Վարող Անձը Կալանաւորուած է

Կալանաւորուած է «Դուխով Հայաստան բաց հասարակութիւն» էջը վարող անձը: Անոր մեղադրանք առաջադրուած է «Ազգային, ցեղային կամ կրօնական թշնամանք յարուցելու» յօդուածով:



«Դուխով Հայաստան բաց հասարակութիւն» ֆեսպուքեան էջը

«Մէկ անձի մեղադրանք է առաջադրուել քրէական օրէնսգրքի 226 յօդուածի 2-րդ մասի 1-ին կէտով: Որպէս խափանման միջոց նրա նկատմամբ ընտրուել է կալանաւորումը», - «Ազատութեան» փոխանցած են ԱԱԾ մամուլի կեդրոնէն: - «Դուխով Հայաստան բաց հասարակութիւն» էջը 4 Ապրիլէն այլեւս չի գործեր: Նախքան այդ, էջին մէջ մեծամասամբ կը տեսնենք նոր կառավարութեան ծաղրող նկարներ, որոնք կ'ուղեկցուին հայհոյանքներով, գրառումներուն մէջ կան ակնյայտ ապատեղեկատուութիւններ, օրինակ՝ «Վաճառւում է Օփերայի շէնքը, տարածքը յարմար է քազինոյի կամ գիշերային ակումբի համար», կամ՝ «Հայաստանի ֆութպոլի ֆետերացիայի նախագահը յայտարարեց, որ Հայաստանի հաւաքականի ֆութպոլիստները ձերբակալուած են, յարուցուել է քրէական գործ»:

Անցած շաբաթ, կառավարութեան նիստի ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինեանը յայտարարած էր. - «Եթէ որոշ յանցաւոր շրջանակներ միլիոններ են ծախսում սոցիալական ցանցերում, լրատուամիջոցներում, հասարակական կարծիքի մանիփուլացիաներ անելու համար, դա ազգային անվտանգութեան խնդիր է»:

Դիմելով Ազգային անվտանգութեան ծառայութեան (ԱԱԾ) տնօրէն Արթուր Վանեցեանին՝ Փաշինեանը յոյս յայտնեց, որ անոր ղեկավարած ծառայութիւնը այս հարցի վերաբերեալ կը կարողանայ ապահովել արդիւնքներ եւ կոշտ հակահարուած տալ կեղծ հաշիւներուն, ի հարկէ՝ կասկածի տակ չդնելով խօսքի ազատութեան իրաւունքը:

Աւելի վաղ ԱԱԾ մամուլի կեդրոնէն «Ազատութեան» փոխանցած էին փորձաքննութիւններու ազգային բիւրոյի Պետական ոչ առեւտրային կազմակերպութիւններու (ՊՈԱԿ) կողմէ տրուած եզրակացութիւնը «Դուխով Հայաստան բաց հասարակութիւն» կեղծ էջի վերաբերեալ, ըստ որու. « «Դուխով Հայաստան» անուամբ գրանցուած օգտատիրոջ կատարած գրառումներում առկայ են բացասական գնահատականներ Հայաստանի ազգային հերոսի, էջմիածնի Մայր տաճարի եւ Հայաստանի քաղաքացիների վերաբերեալ, ինչպէս նաեւ Հայաստանում գործող կրօնական կազմակերպութեան գերազանցութիւնը շեշտադրող, ազգամիջեան յարաբերութիւններում սեպ խրող եւ դրանք խաթարող, կրօնական կազմակերպութեան դէմ արշաւողների, Հայաստանի քաղաքացիների եւ քաղաքական գործիչների նկատմամբ սպառնալիք արտայայտող ու բռնարարական գործողութիւններ իրականացնելու կոչեր պարունակող արտայայտութիւններ եւ ձեւակերպումներ»:

## ԼՈՒՐԵՐ

# Ատրպէյճանը Կրնայ իր Տարածքային Ամբողջականութիւնը Վերականգնել Ռազմական Ճանապարհով. Ալիեւ

Ատրպէյճանը հակուած է Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորման, բայց պիտի շարունակէ իր ռազմական հզօրութեան մեծացումը, յայտարարած է Ատրպէյճանի Նախագահ Իլհամ Ալիեւը, կը հաղորդէ «Ինթըրֆաքս-Ատրպէյճանը»:

«Մենք կը փորձենք հակամարտութիւնը կարգաւորել քաղաքական-դիւանագիտական եւ խաղաղ ճանապարհով: Բայց ատոր հետ մէկտեղ, կը մեծցնենք մեր ռազմական հզօրութիւնը:

Այս ուղղութեամբ այսուհետեւ եւս պիտի ձեռնարկուին բոլոր անհրաժեշտ քայլերը»,- յայտարարած է Ալիեւը:

«Ատրպէյճանը այս ուղղութեամբ բոլոր անհրաժեշտ աշխատանքները կը կատարէ: Ռազմական եւ տնտեսական ներուժը, բնականաբար, մեր երկիրը կ'ամրապնդէ: Մենք այսուհետեւ այս ուղղութեամբ եւս պիտի շարունակենք մեր հետեւողական քաղաքականութիւնը»,- աւելցուցած է ան:

Ալիեւը նշած է, որ 2016 Թուականին ղարաբաղեան հակամարտութեան գօտիին վրայ Հայաստանի հետ ապրիլեան ռազմական բախումները ցոյց տուին, որ «Ատրպէյճանը կրնայ իր տարածքային ամբողջականութիւնը վերականգնել ռազմական ճանապարհով»:

«Մեր հիմնական նպատակն է հակամարտութեան կարգաւորումը»,- ըսած է Ատրպէյճանի Նախագահը:

# ԱՄՆ-ն եւ ՆԱԹՕ-ն կը Ջգտին Իւրացնել Անդրկովկասը. Զախարովա

Ռուսաստանը Անդրկովկասի «ռազմական իւրացման» ԱՄՆ-ի եւ ՆԱԹՕ-ի գործողութիւնները կը համարէ լուրջ ռազմա-քաղաքական մարտահրաւէր: Այս մասին ատրպէյճնական ONA պարբերականի հետ հարցազրոյցի ժամանակ ըսած է Ռուսաստանի Դաշնութեան արտաքին գործոց նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:



Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովա

Անոր խօսքով՝ այս տարածաշրջանը, անկասկած, կը դասուի Ռուսաստանի յատուկ կարեւորութեան շահերու ոլորտին մէջ: Սա առաջին հերթին պայմանաւորուած է աշխարհագրական մերձաւորութեամբ: «Ակնյայտ է Հարաւային Կովկասի նշանակութիւնը լայն աշխարհաքաղաքական առումով: Այսօր այստեղ լիովին կը դրսեւորուի յայտնի արտատարածաշրջանային ուժերու՝ իրենց կանոններով Անկախ Պետութիւններու Համագործակցութեան (ԱՊՀ) տարածքը վերաձեւելու անպատկառ ձգտումը: Որպէս Ռուսաստանի համար լրջագոյն ռազմաքաղաքական մարտահրաւէր կը դիտարկենք Անդրկովկասի «ռազմական իւրացման» ԱՄՆ-ի եւ ՆԱԹՕ-ի գործողութիւնները: Եւ, ի հարկէ, անհնար է չըսել Լեռնային Ղարաբաղի չկարգաւորուած հակամարտութեան մասին, որուն, ցաւօք, ներգրաւուած են մեր մերձաւորագոյն բարեկամներն ու գործընկերները՝ Ատրպէյճանը եւ Հայաստանը:

Հարաւային Կովկասի մէջ կայունութեան աջակցութիւնը, տարածաշրջանի աստիճանական զարգացման ապահովումը տարածաշրջանի երկիրներու հանդէպ Ռուսաստանի բարեկամական վերաբերմունքի պարագային այսուհետեւ եւս պիտի մնայ ռուսական արտաքին քաղաքականութեան կարեւորագոյն նպատակներէն մէկը»,- նշած է ան:

# 2019-ի Մարտին «Զուարթնոց» Օդակայանի Ուղեւորներու Թիւը Աճած է 7 Տոկոսով

Այս Մարտին նախորդ Մարտի համեմատ ուղեւորահոսքը աճած է 7 տոկոսով: Այդ մասին կը տեղեկացնէ «Զուարթնոց» միջազգային օդակայանի փէյսպուքեան էջը:

Ըստ «Զուարթնոց»-ի, ընթացիկ տարուան Մարտին Հայաստանի երկու օդակայաններուն մէջ ուղեւորահոսքը ընդհանուր կազմած է 199 հազար 855 մարդ՝ 2018 Թուականի նոյն ամսուան ցուցանիշը գերազանցելով 7 տոկոսով:

«2019թ. Մարտին, 2018թ. նոյն ժամանակահատուածի համեմատ «Զուարթնոցում» ուղեւորահոսքն աւելացել է 7,6 տոկոսով: Եթէ 2018թ.Մարտին «Զուարթնոց» միջազգային օդանաւակայանի ծառայութիւններից օգտուել է 175 հազար 605 ուղեւոր, ապա 2019թ.Մարտի ցուցանիշը կազմում է 188 հազար 946 ուղեւոր», - ըսուած է հաղորդագրութեան մէջ:

«Զուարթնոց»-ը նաեւ կը տեղեկացնէ, որ 2019 Թուականի Մարտին Գիւմրիի «Շիրակ» օդակայանին մէջ ուղեւորահոսքը կազմած է 10, 909 մարդ: 2018 Թուականի նոյն ամսուան 11, 138 ուղեւորահոսքի համեմատ նուազումը կազմած է 2,1 տոկոս:

Տարեսկիզբէն Հայաստանի Հանրապետութեան երկու օդակայաններու ուղեւորահոսքը կազմած է 578 հազար 575 մարդ, որ 10,2 տոկոսով կը գերազանցէ նախորդ տարուան նոյն ամիսներու ցուցանիշը:

«Զուարթնոց» եւ «Շիրակ» օդակայաններուն մէջ 2019 Թուականի Յունուար- Մարտ ամիսներուն, նախորդ տարուան նոյն ամիսներուն հետ համեմատած, 8,3 տոկոսով աճ գրանցած են նաեւ Թռիչք-վայրէջքները, ըսուած է հաղորդագրութեան մէջ:

# Մնացականեան. Հայաստանը Պիտի Շարունակէ Առաջ Տանիլ Ցեղասպանութեան Կանխարգելման Օրակարգը



Նախարար Զոհրապ Մնացականեան կայցելէ Քիկալիի ցեղասպանութեան թանգարանը

Հայաստանը՝ որպէս միջազգային հանրութեան պատասխանատու անդամ, պիտի շարունակէ հետեւողականօրէն առաջ տանիլ ցեղասպանութեան կանխարգելման օրակարգը: Այս մասին յայտարարած է արտաքին գործոց նախարար Զոհրապ Մնացականեանը Քիկալի պաշտօնական այցի շրջանակէն ներս, Ռուանտայի խորհրդարանի Պատգամաւորներու պալատի նախագահ Տոնաթիլ Մուքապալիսայի հետ հանդիպման ժամանակ:

Զրուցակիցները շեշտած են այդ հարցի վերաբերեալ միջազգային հարթակներու վրայ Հայաստանի եւ Ռուանտայի համատեղ ջանքերու ներդրման կարեւորութիւնը:

Տոնաթիլ Մուքապալիսան ողջունած եւ բարձր գնահատած է Զոհրապ Մնացականեանի մասնակցութիւնը Ռուանտայի ցեղասպանութեան 25-ամեակին նուիրուած միջոցառումներուն:

Ներկայացնելով Թաւշեայ յեղափոխութեան շնորհիւ Հայաստանի մէջ տեղի ունեցած փոփոխութիւնները եւ անոր յաջորդած զարգացումները, Մնացականեանը ընդգծած է, որ կառավարութեան՝ ժողովուրդի կողմէն տրուած լայն մանտաթի հիման վրայ իրագործուող բարեփոխումները ուղղուած են երկրին մէջ ժողովրդավարութեան ամրապնդման եւ տնտեսական ոլորտի մէջ հաւասար հնարաւորութիւններու ընձեռման, կը հաղորդէ ՀՀ Արտաքին գործոց նախարարութեան լրատուութեան եւ հանրային դիւանագիտութեան վարչութիւնը:

# ԱԳՆ Խօսնակը Արձագանգած է Միջազգային Գործընկերներու Յայտարարութիւններուն

Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան խօսնակը արձագանգած է Երեւանի մէջ հաւատարմագրուած որոշ դիւանագիտական ներկայացուցչութիւններու անունով տարածուած յայտարարութիւններուն, որոնց մէջ, մասնաւորապէս, յորդոր կայ դատապարտել ատելութեան խօսքը:

«Տեղեակ ենք այդ յայտարարութիւններից, որտեղ արտայայտուած էր մտահոգութիւն Հայաստանի հասարակական կեանքում տեղ գտած քննարկումների առնչութեամբ եւ անդրադարձ էր կատարւում ՀՀ-ի միջազգային պարտաւորութիւններին», - ըսուած է ԱԳՆ մամուլի քարտուղար Աննա Նաղդալեանի յայտարարութեան մէջ:

«ՀՀ կառավարութիւնն ամբողջովին հաւատարիմ է մարդու իրաւունքների պաշտպանութեան եւ խրախուսման իր պարտաւորութիւններին: Հայաստանում տեղի ունեցած ոչ բռնի ժողովրդավարական յեղափոխութիւնը լաւագոյնս փաստում է, որ մարդու իրաւունքները, որպէս կանոն, արդիւնաւէտօրէն գործում են, եթէ մաս են դառնում հասարակական համաձայնութեան եւ ընկալւում են, որպէս համընդհանուր հասարական եւ բարոյական արժէքներ», - յայտարարած է Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան խօսնակը՝ շարունակելով. - «Ուստի, այս ծիրէն ներս մեր միջազգային գործընկերները պէտք է առաւել յարգանք եւ զգայունութիւն ցուցաբերեն հայկական հասարակութեան հանդէպ եւ ձեռնպահ մնան հասարակական քննարկումների անհարկի ուղղորդումից, եթէ անգամ նրանք համաձայն չեն դրանց Թոնայնութեան հետ: Կ'ուզենայինք յիշեցնել, որ հասարակական բարոյականութեան սկզբունքը մաս է կազմում մարդու իրաւունքների միջազգային պարտաւորութիւններին, եւ դրանք չեն կարող անտեսուել: Իրենց հերթին, ՀՀ իշխանութիւնները չեն հանդուրժելու որեւէ անօրինական գործողութիւն եւ շարունակելու են պաշտպանել բոլոր քաղաքացիների սահմանադրական իրաւունքները»:

Յիշեցնենք, որ Հայաստանի մէջ Եւրոպական միութեան պատուիրակութիւնը եւ Հայաստանի մէջ հաւատարմագրուած ԵՄ անդամ պետութիւններու դեսպանութիւնները համատեղ յայտարարութիւն տարածած էին՝ Հայաստանի մէջ բոլորին յորդորելով դատապարտել ատելութեան խօսքը, եւ կոչ ընելով իրաւապահ մարմիններուն՝ ձեռնարկել անյապաղ քայլեր Հայաստանի քաղաքացիներու ֆիզիքական անվտանգութեան երաշխիքներու ապահովման ուղղութեամբ:

## Արա Նաճարեան Կլենտէյլի Քաղաքապետ Ընտրուած է



ԱՄՆ Կլենտէյլ քաղաքի քաղաքային խորհուրդի անդամ Արա Նաճարեան ընտրուած է Կլենտէյլի քաղաքապետ: Նաճարեանը այդ պաշտօնով կը փոխարինէ Զարեհ Սինանեանը:

Արա Նաճարեան Կլենտէյլի քաղաքապետի պարտականութիւնները պիտի ստանձնէ 4-րդ անգամ ըլլալով: Առաջին անգամ ան Կլենտէյլի քաղաքապետի պաշտօնին ընտրուած է 2005 Ապրիլին:

«Ես իսկապէս շնորհակալ եմ քաղաքապետ ընտրուելու հնարաւորութեան համար: Ես սերտ համագործակցութեան յոյս ունիմ իմ գործընկերներու եւ քաղաքային խորհուրդի աշխատակիցներու հետ՝ Կլենտէյլը իբրեւ իւրայատուկ վայր պահպանելու հարցով»,- ըսած է Նաճարեան:

## Հայաստանը Մարդասիրական Օգնութիւն Ուղղարկած է Իրան



Հայաստանի արտակարգ իրավիճակներու նախարարութենէն (ԱԻՆ) դէպի Իրան շարժած է ջրհեղեղէն տուժած ազգաբնակչութեան օժանդակութիւն ցուցաբերելու նպատակով մարդասիրական օգնութեան շարասիւնը:

ԱԻՆ հաղորդագրութեան համաձայն՝ օգնութեան խմբաքանակը Իրանի բարեկամ ժողովուրդին տրամադրուած է Ռուս-Հայկական մարդասիրական արձագանգման կեդրոնի գործունէութեան շրջանակէն ներս՝ Իրանի Կարմիր Մահիկի միջազգային կազմակերպութեան միջոցով: Ան կը ներառէ 40 վրան, 250 մահճակալ եւ 4000 ծածկոց: Շարասիւնի աւարտական կէտը Իրանի Թաւրիզ քաղաքն է, ուր եւ խմբաքանակը պիտի փոխանցուի Իրանի Կարմիր Մահիկի միջազգային կազմակերպութեան:

Միջոցառման ներկայ էին Արտակարգ իրավիճակներու նախարար Ֆելիքս Ցոլակեանը եւ Հայաստանի մէջ Իրանի դեսպան Սեյէտ Քազէմ Սաճատին, Ռուսաստանի դեսպանատան ներկայացուցիչներ:

Ցոլակեանը նշած է, որ Իրանը պատուհասած աղէտը աննախադէպ էր իր չափերով եւ ծաւալներով, շեշտելով, որ բնական տարերքի վտանգը դեռ կը պահպանուի եւ կրնայ հասնիլ մայրաքաղաք Թեհրան:

Սեյէտ Քազէմ Սաճատին շնորհակալութիւն յայտնած է Հայաստանին՝ «մարդասիրական զգացմունք ցուցաբերելու համար»: «Այս օգնութիւնը մարդասիրութեան շատ խորհրդանշական նշան է»,- ըսած է Իրանի դեսպանը:

Դիւանագէտը նշած է, որ Հայաստանի եւ Իրանի մէջ գոյութիւն ունեցող յարաբերութիւններու վկայութիւնը վարչապետ Նիկոլ Փաշինեանի՝ Իրան կատարած արդիւնաւէտ այցն էր:

Իր խօսքը դեսպանը եզրափակած է հայերէն «Շնորհակալութիւն» արտայայտութեամբ:

Իրանի մէջ ջրհեղեղի պատճառով աւելի քան 70 մարդ զոհուած է: Բնական աղէտի հետեւանքով տուժած է աւելի քան 1900 քաղաք ու գիւղ:

## Հանդիպում Դեսպան Վահագն Մելիքեանի Հետ

Շարունակուած էջ 1-էն

թիւնը՝ մեկնելով բացառապէս երկրի ազգային շահերէն:

Տեղի ունեցաւ մտքերու փոխանակում՝ հակազդելու համար Ատրպէյճանական լոպպիստական աշխատանքներուն, որոնք վերջին շրջանին թափ առած են Միացեալ Նահանգներէն ներս:

Հնչակեան Կուսակցութեան ատենապետ Ընկ. Համբիկ Սարաֆեան վերահաստատեցին որ, Կուսակցութիւնը պիտի շարունակէ համագործակցութիւնը Հայաստանի ներկայ իշխանութիւններուն ու պետական այլ կառոյցներուն հետ, յատկապէս որ, Կուսակցութիւնը տարիներ շարունակ պայքարած է նախկին վարչակարգին դէմ ու մեծապէս կը գնահատէ ժողովրդային յեղափոխութեան յաղթանակին շնորհիւ Հայրենիքէն ներս տեղի ունեցող շօշափելի փոփոխութիւններն ու տեղաշարժերը, որոնք իրենց դրական անդրադարձը կ՚ունենան սփիւռքահայութեան լայն զանգուածներուն մօտ:

www.massisweekly.com

## Տիկ. Աննա Յակոբեանի Այցը

Շարունակուած էջ 1-էն

յայտնեց նշելով որ 25 տարիներ առաջ եղած է Հայաստանի առաջին հիւպատոսը Լոս Անճելոսի մէջ, նոր ուղի մը բանալով Հայրենիքի եւ ԱՄՆ-ի այս շրջանի փոխյարաբերութիւններուն մէջ: Այնուհետեւ կարդաց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի շնորհաւորական գիրը Հիւպատոսարանի հիմնադրութեան 25 ամեակին առիթով, մաղթելով նորանոր յաջողութիւններ Հայրենիք-Սփիւռք փոխադարձ կապերու ամրապնդման մէջ:

Ողջոյնի եւ շնորհաւորական խօսքերով հանդէս եկան Ուաշինկթընի մօտ Հայաստանի արտակարգ լիազօր դեսպան Վարուժան Ներսիսեանն ու Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութեան ընդհամա» լարային քառեակին:

«Մասիս» ջերմօրէն կը շնորհաւորէ Հայաստանի Հիւպատոսարանի 25-ամեակը, հիւպատոս Դոկտ. Արմէն Բայբուրդեանն ու համայն աշխատակազմը, մաղթելով նորանոր յաջողութիւններ յարատեւութիւն եւ գեղեցիկ ծրագիրներու իրագործում:

### ԱՆՆԱ ՅԱԿՈԲԵԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Տիկ. Աննա Յակոբեան իր Լոս Անճելոս իր կարճատեւ այցելութեան ընթացքին ունեցաւ բազմաթիւ հանդիպումներ տեղական քաղաքական շրջանակներու եւ ազգային մարմիններու հետ:

Շաբաթ, Ապրիլ 6-ի երեկոյեան Տիկ. Յակոբեան ներկայ գտնուեցաւ Հայ Բժիշկներու Ընկերակցութեան կողմէ՝ ի պատիւ իրեն



Աննա Յակոբեանի հանդիպումը Լոս Անճելոսի քաղաքապետ Էրիք Կարսէթիի հետ

կազմակերպուած ճաշկերոյթին, որ տեղի ունեցաւ «Շերաթոն Եունիվըրսըլ» հիւրանոցէն ներս: Երեկոյի ընթացքին կատարուեցաւ հանգանակութիւն ի նպաստ Տիկ. Յակոբեանի գլխաւորած երկու բարեսիրական հիմնադրամներուն՝ «Իմ Քայլը» եւ «Ժպիտներու Քաղաք» ծրագիրներուն, որոնք բարեսիրական եւ առողջապահական ծրագիրներ կ՛իրականացնեն Հայաստանէն ներս:

Երկուշաբթի, Ապրիլ 8-ին Տիկ. Յակոբեան ներկայ եղաւ Լոս Անճելոսի քաղաքապետարանէն ներս ի պատիւ իրեն կազմակերպուած ընդունելութեան ու այս առթիւ հանդիպում ունեցաւ Լոս Անճելոսի քաղաքապետ Էրիք Կարսէթիի հետ:

Նոյն օրը, կէսօրէ ետք, ՀՀ Հիւպատոսարանէն ներս Տիկ. Յակոբեան հանդիպում ունեցաւ համայնքի հոգեւոր առաջնորդներուն, քաղաքական երեք կուսակցութիւններու եւ բարեսիրական կազմակերպութիւններու ղեկավարութեանց հետ:

Երեկոյեան, Կլէնտէլի «Ալեքս» հանդիսասրահէն ներս տեղի ունեցաւ հրապարակային հանդիպում, որուն ներկայ էին աւելի քան հազար հանդիսականներ:

Տիկ. Յակոբեան նախ ունեցաւ կուռ եւ բովանդակալից ելոյթ մը, անդրադառնալով Հայաստանի իրադարձութիւններու եւ ապա պատասխանեց ժողովուրդի կողմէ իրեն ուղղուած բազմաթիւ գրաւոր ու բանաւոր հարցերուն:

նուր քարտուղար Վահագն Մելիքեան: Այս վերջինը կարդաց նաեւ արտաքին գործոց նախարար Զոհրապ Մնացականեանի շնորհաւորական գրութիւնը հիւպատոսարանի 25-ամեայ արծաթեայ յոբելեանին առթիւ, որուն մէջ կոչ կ՚ուղղուի «ձեռք ձեռքի տալով համախումբ աշխատիլ ի նպաստ հայութեան գերագոյն շահերուն...»:

Տիկին Աննա Յակոբեան յոտնկայս եւ որոտընդոստ ծափահարութիւններով ողջունուեցաւ իր բեմ հրաւիրուիլը: Ան իր բազմաբնոյթ ելոյթով արտայայտուեցաւ թաւշեայ յեղափոխութենէն ետք երկրի տարբեր մարզերուն մէջ ծրագրուած նախաձեռնութիւններուն եւ գեղեցիկ ծրագիրներու մասին: Մասնաւորաբար շեշտեց իր հիմնած բարեգործական ծրագիրներուն եւ տարբեր բնագաւառներու մէջ կանանց մասնակցութեան, աղքատութեան եւ քաղցկեղի յաղթահարման դժուարին ճանապարհին մասին: Ապա ջերմօրէն շնորհաւորեց հիւպատոսարանի 25-ամեակը:

Ճաշի սպասարկութենէն առաջ տեղի ունեցաւ հիւպատոսարանի շէնքի խնամակալ մարմնի եւ յարակից կառոյցներու ղեկավարութեան յուշանուէրներու յանձնում ձեռամբ Տիկին Աննա Յակոբեանի եւ հիւպատոս Դոկտ. Արմէն Բայբուրդեանի:

Աւարտին գործադրուեցաւ երաժշտական յայտագիր մը մասնակցութեամբ շնորհալի երգչուհի Սիրանոյշ Գասպարեանի եւ «Փրի-

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

## Նախագահ Սարգսեան Այցելած Է Յորդանան Գետի Ափին Պտնուող Յիսուս Քրիստոսի Մկրտութեան Վայրը



Աշխատանքային այցելութեամբ Յորդանան գտնուող Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեան Ապրիլ 5-ին այցելած է Յորդանան գետի ափին գտնուող Յիսուս Քրիստոսի մկրտութեան վայրը:

Հանրապետութեան նախագահը շրջագայած է քրիստոնէական այդ սրբավայրին մէջ, գրառում կատարած պատուոյ հիւրերու գիրքին մէջ: Ան նշած է, որ Յորդանանի հոգատարութիւնը նմանատիպ համաշխարհային սրբավայրի նկատմամբ քաղաքակրթութիւններու համերաշխութեան եւ երկխօսութեան լաւագոյն վկայութիւնը կը հանդիսանայ:

Նախագահ Արմէն Սարգսեան այցելած է նաեւ Յորդանան գետի ափին կառուցուած հայկական Սուրբ Կարապետ եկեղեցի եւ մօտ վառած հոն:

Նշենք, որ նախագահ Սարգսեան Յորդանան կը գտնուէր մասնակցելու Համաշխարհային տնտեսական համաժողովին՝ Մերձաւոր Արեւելքի եւ Հիւսիսային Ափրիկէի նուիրուած հանդիպումին իբրեւ բանախօս:

## Հանդիպում Յորդանանի Հայ Համայնքի Ներկայացուցիչներու Հետ



Նախագահ Սարգսեանը Ապրիլ 6-ի երեկոյեան հանդիպած է Յորդանանի հայ համայնքի ներկայացուցիչներու հետ:

Դիմելով տեղի հայերուն՝ նախագահ Սարգսեան ըսած է. «Այն փաստը, որ մենք ապրում ենք աշխարհի տարբեր երկրներում, սփռուած ենք աշխարհի տարբեր մասերում, գուցէ ոչ թէ թերութիւն է, այլ ընդհակառակը՝ առաւելութիւն, որովհետեւ մենք աշխարհի այն քիչ ժողովուրդներից ենք, որոնք կարող են շատ յստակ ասել. մենք փոքր պետութիւն ենք, բայց համաշխարհային ազգ»:

Նախագահի խօսքով՝ «մենք բոլորս հայ ենք եւ ունենք պարտականութիւն՝ ծառայելու մեր հայրենիքին»: Հպարտութեամբ նշելով, որ Յորդանանի հայ համայնքը լիովին ընդելուզուած է երկրի կեանքին մէջ՝ նախագահ Սարգսեանը ըսած է. «Սա շատ էական է: Մեր բոլոր համայնքներում մեր հայրենակիցները պէտք է հետեւեն մեծ բանաստեղծ, երգիչ եւ երգահան Շարլ Ազնաւուրի օրինակին, որը միշտ ասում էր՝ ես հարիւր տոկոսով հայ եմ եւ հարիւր տոկոսով ֆրանսացի: Սա այն մօտեցն է, որով մեզնից իւրաքանչիւրը պէտք է ապրի Սփիւռքում:

Լինել հարիւր տոկոսով յորդանանցի՝ լիովին ներգրաւուած այս երկրի քաղաքական, տնտեսական, մշակութային կեանքին եւ միաժամանակ հարիւր տոկոսով հայ: Սա է յաջողութեան բանաձեւը»:

Նշելով, որ Յորդանանի թագաւորական ընտանիքը պատմականօրէն միշտ ալ աջակից եղած է եւ ջերմ վերաբերմունք ունեցած է հայ ժողովուրդի նկատմամբ՝ նախագահ Սարգսեան ըսած է, որ ատոր վկայութիւնն է նաեւ Յորդանանի թագաւոր Ապտալլահ Երկրորդ Ըպն Ալ-Հուսէյն Ալ-Հաշիմիի հետ իր հանդիպումը: «Մենք ունեցանք շատ ջերմ զրոյց: Քննարկեցինք մեր երկու ժողովուրդների պատմութիւնն ու երկու պետութիւնների յարաբերութիւնները՝ նկատելով, որ հսկայական ներուժ ունենք տարբեր ոլորտներում: Մեր երկու երկրներն ունեն բազմաթիւ ընդհանրութիւններ, հարուստ չլինելով բնական ներուժով՝ Հայաստանը եւ Յորդանանը կարեւորում ու գնահատում են մարդկային ներուժը»,- ըսած է Արմէն Սարգսեանը եւ աւելցուցած. «Մեր լաւագոյն բնական հարստութիւնը դուք էք՝ հայ ժողովուրդը»:

Նախագահ Սարգսեանը ընդգծած է, որ 21-րդ դարում ամենաթանկ արժէքը պիտի ըլլայ ստեղծագործ մարդը: «Ես վստահ եմ, որ 21-րդ դարը մեր՝ հայերի դարն է լինելու, որովհետեւ մենք ստեղծագործ ժողովուրդ ենք, մեր ճանապարհը մտքի հզօրութեան, մտքի արժէքի ճանապարհն է», - ըսած է ան:

## Էրպիլի Առաջին Հայկական Եկեղեցւոյ Բացման Եւ Օծման Արարողութիւնը Կատարուեցաւ



«Հայերն այսօր»-ի փոխանցմամբ,՝ այսօր, Շաբաթ 6 ապրիլին, Ս. Մարիամ Աստուածածնայ Աւետման տօնի նախօրեակին, Քիւրտիստանի մայրաքաղաք Էրպիլի՝ Այնքաուա շրջանին մէջ բացումը եւ օծումը կատարուեցաւ նորակառոյց առաջին հայկական առաքելական եկեղեցիին:

Եկեղեցւոյ օծման կարգը կատարեց Իրաքի Հայոց թեմի առաջնորդ Տ. Աւագ Արք. Ասատուրեան, արարողութեան մասնակցեցան Անթիլիասի միաբանութեան անդամներէն՝ Վարուժան Արք. Հերկելեան, Եգիպտոսի Հայոց թեմի առաջնորդ Աշոտ եպս. Մնացականեան, Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպս. Նալպանտեան, Էջմիածինի Գէորգեան ճեմարանի տեսուչը՝ Գարեգին վարդապետ Համբարձումեան, Ֆրանսայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Վահան եպս. Յովհաննէսեան, Ռումանիոյ Հայոց թեմի առաջնորդ Տ. Տաթեւ եպս. Յակոբեան եւ Իրաքի թեմէն ներս ծառայող հոգեւորականաց դասը:

Բացման արարողութեան ներկայ գտնուած են Իրաքի մէջ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան տիար Հրաչեայ Փոլատեան, Իրաքի մէջ քրիստոնէական յարանուանութեանց ներկայացուցիչները, Քիւրտիստանի կառավարութեան ներկայացուցիչներ, Իրաքի

Կեդրոնական վարչութեան անդամները, շրջաններու թաղական խորհուրդները եւ հոծ հաւատացեալ բազմութիւն մը:

Էրպիլի մէջ առաջին հայկական եկեղեցին անուանակոչուած է Ս. Խաչ անունով:

## Հնդկաստանի Մէջ Վերականգնուած Է 300 Տարուան Հայկական Ցուցանակը




Վերջերս Հնդկաստանի Սայտապետ քաղաքին մէջ վերականգնուած է 300 տարեկան հայկական ցուցանակը, այս մասին կը հաղորդէ The Times of India-ն:

Ցուցանակը, որ կը յիշատակէ 1726-ի Մարմալոնկ կամուրջի կառուցումը Այտար գետի վրայ՝ հայ վաճառական, Մատրասի մէջ հայ համայնքի առաջնորդ Խոճա Պետրոս Ոսկանի կողմէ, յայտնուած էր գետնի տակ: Սակայն այժմ, Հայաստանի հիւպատոսարանը, քաղաքի ղեկավարութեան հետ համատեղ ջանքերով, կրցած է վերականգնել զայն իր նախնական տեղը:

«Փետրուարին 20 հոգինոց խումբ մը այցելած է քաղաք ու տեսած ցուցանակը»,-ըսած է Ջեննայի մէջ Հայաստանի պատուաւոր հիւպատոս Շիւկումար Իշւարան ու նշած, որ ցուցանակը գրեթէ անցած էր գետնի տակ:

Նախորդ շաբաթ արդէն ցուցանակը վերականգնուած է՝ վերամբարձ կռունկի միջոցով: Կը նշուի, որ ցուցանակը պաշտօնապէս պիտի բացուի Մայիսին տեղի ունենալիք ընտրութիւններէն ետք:

## Աննա Յակոբեանին Նուիրուած Յատուկ Երեկոյ Միացեալ Նահանգներու Քոնկրէսէն Ներս



«Առանց գէթ մէկ փամփուշտի, թաւշեայ, ամենախաղաղ յեղափոխութեան հերոսները», այսպէս ներկայացուցած են Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի տիկին, թերթի գլխաւոր խմբագիր եւ երկու հիմնադրամի հիմնադիր Աննա Յակոբեանը ամերիկեան քոնկրէսականները՝ Միացեալ Նահանգներու Քոնկրէսէն ներս Յակոբեանին նուիրուած յատուկ երեկոյի ընթացքին:

Այս մասին կը յայտնէ «Ամերիկայի ձայնը»:

Աննա Յակոբեանը իր ելոյթին մէջ ներկայացնելով Հայաստանի ձեռքբերումները ընդգծած է, որ երկիրը լիարժէք ժողովրդավարութեան եւ իրական տնտեսական աճի ապահովման ճանապարհին է եւ այդ ճանապարհին ողջունելի է իւրաքանչիւր աջակցութիւն Հայաստանի բարեկամներու կողմէն:

Հայկական արմատներ ունեցող քոնկրեսական ճեքի Սփիրը ընդգծած է, որ Քոնկրէսը իր կողմէն ամէն ջանք պիտի գործադրէ, որպէսզի Միացեալ Նահանգները Հայաստանին արժանի աջակցութիւն ցուցաբերէ թէ տնտեսական եւ թէ քաղաքական առումով: «Մենք կ'ուզենք համոզուած ըլլալ, որ Հայաստանի մէջ ժողովրդավարութիւնը ոչ թէ կը պահպանուի, այլ որ այն կը բարգաւաճի եւ երկիրը լիարժէք կը զարգանայ», նշած է Սփիրը: Հայաստանի յեղափոխութիւնը տպաւորած էր նաեւ Դեմոկրատական կուսակցութեան առաւել ազդեցիկ քոնկրէսականներէն մէկը՝ Ատամ Շիֆը, որ բազմաթիւ այլ քոնկրէսականներու օրինակով, եկած էր անձամբ ծանօթանալու Աննա Յակոբեանի հետ:

«Մեզի անհրաժեշտ է մեր երկիրներու գործընկերութիւնը նոր մակարդակի բարձրացնել, որպէսզի օգնենք ձեր հրաշալի կառավարութեան յաջողութեան հասնիլ», նշած է Շիֆը:

Եւս մէկ կարեւոր հարց, որու մասին խօսած է Հայաստանի վարչապետի տիկինը քոնկրէսականներուն առջեւ, «Կանայք յանուն խաղաղութեան» նախաձեռնութիւնն է, որու շրջագիծէն ներս հայ կանայք կոչ կ'ընեն աշխարհի բոլոր, այդ շարքին եւ Ատրպէյճանի կանանց իրենց ձայնը բարձրացնելու յանուն խաղաղութեան, որպէսզի սահմանին ոչ մէկ կողմէն երիտասարդներ չզոհուին:

«Ով, եթէ ոչ կանայք, մայրերը առաւել սուր են ապրում երեխայ կորցնելու վիշտը եւ ով, եթէ ոչ կանայք, մայրերը, պէտք է իրենց ձայնը բարձրացնեն յանուն խաղաղութեան», նշած է Յակոբեանը:

Երեքշաբթի պաշտօնապէս մեկնարկած այցը սկսած է Քոնկրէսի եւ Քոնկրէսի գրադարանի այցելութեամբ, ուր Յակոբեանին ներկայացուցած են այստեղ գտնուող հայկական գրականութեան նմուշները:

«Ես բոլորիդ միասին մէկ բան ունեմ ասելու, մէկ լուր ունեմ Հայաստանից, որ բերել եմ», աւելի ուշ Հայաստանի դեսպանատան մէջ Աննա Յակոբեանը ուղիղ դիմած է հայ համայնքին, «Յեղափոխութիւնից յետոյ Հայաստանում ամէն ինչ սպասուածից նոյնիսկ աւելի լաւ է ընթանում»:

Հայաստանը Սփիւռքի կարիքը ունի, սակայն, նոր իրավիճակին մէջ Սփիւռքէն այլ օգնութիւն կ'ակնկալուի, նշած է Յակոբեանը:

Երկու շաբաթէն աւելի տեւողութեամբ Միացեալ Նահանգներ իր այցի ընթացքին Հայաստանի վարչապետի տիկինը պիտի փորձէ գումարներ հանգանակել «Իմ քայլը» եւ «Ժպիտներու քաղաք» բարեգործական հիմնադրամներուն համար, որոնք կը զբաղուին կրթաթոշակներու եւ անապահով ընտանիքներուն օգնութեամբ, ինչպէս նաեւ՝ քաղցկեղով հիւանդ երեխաներու բուժօգնութեան ֆինանսաւորմամբ:

## Հայոց Ցեղասպանութեան Յիշատակումը Սոլվանկի Մէջ

Հայոց ցեղասպանութեան 104-րդ տարելիցը պիտի նշուի Կիրակի, Ապրիլ 28, առաւօտեան ժամը 11:00-էն սկսեալ Բեթանիա Լիւտերական եկեղեցւոյ մէջ: Հասցէ՝ 603 Atterdag Rd., Solvang:



Ցեղասպանութեան հարիւրամեակի առիթով եկեղեցւոյ շրջափակին մէջ զետեղուեցաւ հայասէր-մարդասէր Մարիա Ճեքըպսընի կիսանդրին, առ ի երախտագիտութիւն դանիացի մեծ միսիոնարուհիին կատարած անգնահատելի ծառայութիւններուն ի նպաստ հայ որբերու, նախ Խարբերդի եւ ապա իր հաստատած Ճիպէյլի (Լիբանան) «Թռչնոց բոյն»ին:

Այդ օր գործադրութեան պիտի դրուի յատուկ յայտագիր մը ատենավարութեամբ Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանի եւ որու ընթացքին գեղարուեստական յատուկ յայտագիր մը պիտի ներկայացուի կատարողութեամբ հանրածանօթ երգչուհի Մարալ Բարսեղեանի եւ տաղանդաշատ ջութակահար Անժելա Ամիրեանի: Արժանապատիւ Տէր Մովսէս քհնյ. Շաննաքեան պիտի ներկայացնէ Գերշ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանը ընթերցելով Սրբազան Հօր յատուկ ուղերձը այս առիթով:

Յայտագրի աւարտին հայ եւ տեղացի ներկաներուն պիտի մատուցուի հայկական ճաշ:

Կազմակերպիչ յանձնախումբը կոչ կ'ուղղէ մեր համայնքին խուռներամ մասնակցելու այս իւրայատուկ յուշաձեռնարկին:

Փոխադրութեան համար յատուկ կարգադրութիւններ տնօրինուած են եւ փափաքողներ թող բարեհաճին դիմել Մաշտոց Գոլէճ (818) 548-9345 թիւով:

Արձանագրութեան ժամկէտն է Ապրիլ 20, 2019:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 * $100,00 (first class) for USA**
**$ 125,00 (Air Mail) for Canada.**
**$ 250,00 (Air Mail) Overseas.**
**Name:** ---------------------------------------------
**Address:** ---------------------------------------------
**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------
**Country:** --------------
**Tel :**------------------------ **Email:** --------------------------



## Մահացած է Հայ Դատի Պաշտպան, Սպանացի Լրագրող Խոսէ Անթոնիօ Կուռիարան



*Մարտ 31-ին, 81 տարեկան հասակին երկարատեւ հիւանդութենէն ետք կեանքէն հեռացած է սպանացի ճանչցուած լրագրող, մտաւորական, Հայ դատի պաշտպան ու հայ ժողովուրդի բարեկամ Խոսէ Անթոնիօ Կուռիարան:*

*Ինչպէս կը հաղորդէ «Հայերն այսօր»-ը, 1980 թուականին յայտնի սպանացի լրագրող, մտաւորական, հումանիստ Խոսէ Անթոնիօ Կուռիարան գացած էր Մատրիտի Կրան Վիա պողոտայի վրայ գտնուող «Պոմպէա» թատրոնին մէջ Վուտի Ալէնի նոր ֆիլմը դիտելու: Մինչ կը սպասէր տինկոմ, իր կանգնած տեղէն ոչ հեռու ռումբ կը պայթի: Կուռիարան՝ այն ժամանակ*

*«Փուեպլօ» թերթի փոխտնօրէնը, անմիջապէս խմբագրութիւն կը զանգահարէ, որպէսզի այնտեղէն թղթակից ուղարկեն պատահարը լուսաբանելու: Բայց հէնց նոյն պահուն, երբ ան կը խօսէր տակաւին, մէկ այլ ռումբ ալ հեռախօսի այն խցիկին մէջ պայթեցաւ, ուրկէ ան կապուած էր իր գործընկերներուն հետ:*

*Շատ մեծ դժուարութիւններու գնով բժիշկները կը յաջողին փրկել մարդուն կեանքը, բայց ատկէ յետոյ ան ցմահ հաշմանդամ դարձաւ: Առաջին հարցը, որ կը յուզէր հրաշքով փրկուածին, այն էր, բնականաբար, թէ ովքե՞ր էին այդ գործողութեան հեղինակները եւ ի՞նչ յստակ պահանջներ ունէին անկէ: «Խումբ մը երիտասարդներ՝ ԱՍԱԼԱ-էն»,- կը պատասխանեն ապաքինուողին:*

*Ի՞նչ է ԱՍԱԼԱ-ն, ի՞նչ է Հայաստանը՝ գաղափար իսկ չունէր: Գիտէր միայն, որ նոյն անուանումով հանրապետութիւն մը կայ Խորհրդային Միութեան կազմին մէջ: Սկսաւ աշխուժօրէն հետաքրքրուիլ դէպքով, հայերու կոտորածներու հարցով, Հայաստանի պատմութեան էջերով եւ խնդրեց հանդիպում ոչ թէ կատարողներուն, այլ ԱՍԱԼԱ-ի պատասխանատուներուն հետ:*

*Որոնումներուն այդ ընթացքին կապ կը հաստատէ ֆրանսահայ յայտնի քաղաքական գործիչ Պատրիկ Տեւէճեանի հետ, որ յիշեալ օրերուն նաեւ լայն ճանաչում վայելող իրաւաբան էր, եւ շնորհիւ վերջինիս միջնորդութեան՝ հանդիպում կը կազմակերպուի Պէյրութի մէջ՝ Մոնթէ Մելքոնեանի եւ Ալէք Ենիգոմշեանի հետ: Ժամանակ մը անց լոյս տեսաւ Կուռիարանի «La bomba» («Ռումբը») գիրքը: Թուրքերը, որոնք կը սպասէին նորաթուխ հայատեացի դիրքերէն հանդէս եկող հրապարակախօսի, հիասթափուած էին՝ գիրքի էջերուն վրայ հեղինակն առաջին անգամ սպանական իրականութեան մէջ բարձրաձայնեց Հայոց ցեղասպանութեան փաստը, բացայայտօրէն հանդէս գալով հայասէրի մը դիրքերէ եւ իր ընթերցողին համառօտ կերպով ծանօթացնելով հայ ժողովուրդի անցած պատմական ուղիին մասին:*



*Իրեն հետ պատահածին ու Հայոց ցեղասպանութեան մասին Կուռիարան 2 գիրք գրած է՝ « La bomba» (Ռումբը) եւ «Հայերը. Մոռացուած ցեղասպանութիւն»: Վերջին գիրքին հիման վրայ ֆրանսահայ բեմադրիչ Ռոպերթ Կետիկեան Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին առիթով 2015 թուականին նկարահանած է «Խենթի մը պատմութիւնը» ֆիլմը, որ ցուցադրուած է Քաննի ֆիլմի փառատօնին: Ֆիլմին մէջ բեմադրիչը անդրադարձած է «Հայաստանի ազատագրութեան հայ գաղտնի բանակի» (ASALA) գործունէութեան:*

*Այս ֆիլմով մեկնարկած է «Ոսկէ ծիրան» 12-րդ ֆիլմի փառատօնը:*

## Հայերէնի եւ Հայ Մշակոյթի Դասընթացք Վենետիկի Մէջ




*Երեսունչորրորդ տարին ըլլալով, Պօ-Արաքս Մշակութային Ընկերակցութիւնը զոր Վենետիկի հայագիտութեան ամպիոնի հիմնադիրը՝ Հայր Լեւոն Զէքիեան, հիմնեց, 2019ի Յուլիսին եւ Օգոստոսին կը կազմակերպէ հայերէնի եւ հայ մշակոյթի իր ծաւալուն եւ բազմակերպ ծրագիրը:*

*Դասընթացքը խտացած ձեւով կ'ընթանայ Օգոստոսի 1էն մինչեւ 17, եւ կը բաղկանայ 65 դասաժամերէ, որոնք կը նախատեսեն, մանաւանդ բարձր մակարդակներու համար, արեւմտահայերէնի լեզուաբանական տեսական եւ գործնական գիտելիքներ, ուսուցչական մեթոտաբանութիւն, գրաբար, լեզուի պատմութիւն, արդի արեւմտահայերէնի գրականութիւն, արդի եւ ժամանակակից գեղարուեստական պատմութիւն, ինչպէս նաեւ ստեղծագործական ընթերցումներ, հայ պարի եւ դուդուկի երեկոյեան դասեր եւ առաջնորդուած բազմաթիւ եւ անմոռանալի պտոյտներ:*

*Դասընթացքի փիլիսոփայութիւնը այն է, որ հայերէնի լեզուի ընդարձակ իմաստով, մշակոյթի ծանօթութիւնը եւ գիտութիւնը փոխանցուին որպէս կենդանի գիտելիքներ: Անցեալ տարիներուն մասնակիցները կրցած են այս կերպով լաւացնել իրենց հորիզոնը, թարմացնել իրենց մօտեցումը, եւ հպում ունենալ հայ մշակոյթի եւ ընկեր-տնտեսական պատմութեան ամենակարեւոր կեդրոններէն մէկուն:*

*Այս դասընթացքին արդէն իսկ մասնակցած են աւելի քան 1000 հոգի, ողջ աշխարհի չորս կողմերէն:*

*Կրնաք այս ծրագիրին մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ գտնել հետեւեալ կայքերուն վրայ՝*

*http://www.padus-araxes.com/home-page/summer-course/*

*https://www.youtube.com/watchեւv=E8mVqT6u4mI&feature=share*

*https://www.youtube.com/watchեւv=fTaUGjqn-o0#action=share*

*CRS_2019_ProgrammeEN)*

## Բացուած է Արեւմտահայերէն Ուիքիփետիան

*Երկար սպասումէ ետք, 1 Ապրիլ 2019-ին Արեւմտահայերէն Ուիքիփետիան օժտուեցաւ իր առանձին յղումով՝ hyw.wikipedia.org ( url): Այս կարգանիշին միջոցաւ կարելի է այցելել Արեւմտահայերէն Ուիքիփետիայի առցանց հարթակը: Արեւմտահայերէն Ուիքիփետիայի առանձին հարթակ դառնալու նպատակին նպաստած են Ուիքիմետիա Հայաստան կազմակերպութիւնը եւ «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութիւնը, որոնք անցնող տարիներուն ընթացքին ստեղծեցին Արեւմտահայերէն Ուիքիփետիան ու հովանաւորեցին անոր նախագիծերը:*




*2014 թուականէն ի վեր Արեւմտահայերէն Ուիքիփետիայի շուրջ համախմբուած են հարիւր յիսունէ աւելի կամաւոր խմբագիրներ, որոնք պարբերաբար մասնակցած են վերապատրաստման դասընթացքներու: Այսօր արդէն իսկ ունինք 7500-է աւելի արեւմտահայերէնով յօդուածներ, որոնք տեղակայուած են Արեւելահայերէն Ուիքիփետիայի բաժանմունքին մէջ եւ շուտով պիտի տեղափոխուին Արեւմտահայերէն Ուիքիփետիայի հարթակը:*

*Արեւմտահայերէն Ուիքիփետիա ազատ հանրագիտարանին նպատակը եղած է ու կը մնայ հայթայթել բազմապիսի եւ բազմաբովանդակ՝ հայկական եւ համաշխարհային, յօդուածներ՝ այսպիսով կարեւոր ներդրում ունենալով արեւմտահայերէնի առցանց զարգացման ուղղութեամբ:*

*«Ուիքիփետիան կարեւոր հարթակ մըն է, ուր արեւմտահայերէնը կարելի է գործածել զանազան ձեւերով՝ կարդալով, խմբագրելով, բարելաւելով ու ստեղծելով արեւմտահայերէն յօդուածներ», - ըսած է «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան հայկական բաժանմունքի տնօրէն դոկտ. Ռազմիկ Փանոսեանը, աւելցնելով՝ «Ուրախ ենք, որ մեր աջակցութիւնը արդիւնաւէտ հիմքերու վրայ դրուած է: Յուսանք, որ լեզուին տիրապետող բոլոր անհատները օգտագործեն այս առիթը, համացանցի վրայ զարգացնելու արեւմտահայերէն բովանդակութիւնը»:*

*Նշենք, որ Արեւմտահայերէն Ուիքիփետիայի կարգանիշը ընդունուեցաւ 30 Յունուար 2018-ին SIL International-ի կողմէ, որ ISO 639-3-ը արձանագրող մարմինն է: Նոր կարգանիշ ունենալու միտքը սկիզբ առած էր Արեւմտահայերէն Ուիքիփետիայի առանձին բաժին մը ստեղծելու հեռանկարով, սակայն պիտի կարենայ ծառայել նաեւ համացանցի վրայ արեւմտահայերէնով տարբեր ծրագիրներ (ինչպէս՝ սրբագրիչ, փոխադրիչ, թարգմանիչ) մշակելու աշխատանքին:*

# Massis Weekly

Volume 39, No. 14 Saturday, April 13, 2019

## Yerevan Demands 'More Respect' from EU, UN



YEREVAN (RFE/RL) — Official Yerevan has dismissed international concerns about the state of LGBT rights in Armenia, saying that the United Nations and the European Union should show "more respect" for the Armenian society.

The EU and the UN voiced those concerns on Tuesday in response to a furious backlash against an unprecedented speech delivered by a transgender activist in the Armenian parliament on April 5. The activist, Lilit Martirosyan, complained about widespread hostility and discrimination against sexual minorities in the socially conservative country during parliamentary hearings on human rights.

Martirosyan's appearance on the parliament floor was denounced by both pro-government and opposition parliamentarians, who accused each other of making it possible. It also sparked angry street protests by nationalist groups championing "traditional Armenian values." Some of their members openly advocated violent actions the Armenian LGBT community.

In a joint statement, the EU Delegation in Armenia and the Yerevan-based embassies of EU member states condemned "hate speech, including death threats directed at Ms. Lilit Martirosyan, her colleagues and the LGBTI community as a whole." They urged Armenian law-enforcement authorities to "guarantee the physical safety" of sexual minorities.

The UN office in Yerevan issued a similar statement deploring "the recent rise in hate speech and threats of violence against human rights and LGBTI activists."

Reacting to those statements, the Armenian Foreign Ministry spokeswoman, Anna Naghdalian, insisted that Yerevan is "fully" committed to protecting human rights and "will not tolerate any illegal actions." She stressed at the same time that "human rights are, as a rule, effectively protected if they become part of a social consensus and are perceived as universal social and moral values."

"Therefore, in this context, our international partners should demonstrate more respect and sensitivity towards the Armenian society and refrain from undue engagement in the public debate, even if they disagree with its tonality," Naghdalyan said in written comments.

"We would like to remind that the principle of public morality is part of international commitments on human rights and cannot be ignored," she added.

## Italy Parliament Lower House Approves Motion Recognizing Armenian Genocide



ROME — The Italian Chamber of Deputies on Wednesday approved a motion calling on the Italian government to "officially recognize the Armenian genocide" and raise the profile of this issue at the international level. The motion was approved with 382 votes in favor, none against and 43 abstentions by MPs from the opposition, center-right Forza Italia party. After the vote all the deputies stood up to applaud.

"Recognizing and commemorating the cruelties and atrocities committed in the 20th century must be a constant warning," reads the motion.

The text of the document makes reference to the 1973 decision of the UN Human Rights Commission to recognize as genocide the extermination of 1.5 million Armenians under the Ottoman Empire in 1915-1917, as well as a similar decision backed by the European Parliament in 2015 calling on all its member states to acknowledge the genocide.

The document also cites Pope Francis' description of the Armenian Genocide as "the first genocide of the 20th century."

The motion, submitted by deputies of Five Star Movement, was supported by MPs of far-right League party, the opposition Democratic party and Brothers of Italy party.

On Monday the Turkish Foreign Ministry summoned the Italian ambassador to Ankara, Massimo Gaiani for clarifications on the new measure which sparked discontent in the country.

Speaking to media on Wednesday, Omer Celik, spokesman for the ruling Justice and Development Party, said Italy "is being tricked by Armenian diaspora, which in no way wants normal relations between Turkey and Armenia."

Italy's nine regional councils have already recognized the Armenian Genocide.

## Bipartisan Armenian Genocide Resolution Garners Support of Over 70 House Members

WASHINGTON, D.C. – A bipartisan congressional resolution commemorating the Armenian Genocide was introduced on Monday, with over 70 Members of Congress joining as co-sponsors. This resolution encourages education and greater public awareness of the Armenian Genocide, including America's unprecedented overseas humanitarian relief at the time, reported the Armenian Assembly of America.

Congressional Caucus on Armenian Issues Co-Vice Chair Adam Schiff (D-CA) and Co-Chair Gus Bilirakis (R-FL) spearheaded the resolution, and were joined by the other leaders of the Caucus, Representatives Frank Pallone, Jr. (D-NJ), Peter King (R-NY), and Jackie Speier (D-CA) in underscoring their support for the recognition of the Armenian Genocide.

"Over 100 years ago, the Ottoman Empire undertook a brutal campaign of murder, rape, and displacement against the Armenian people that took the lives of 1.5 million men, women, and children in the first genocide of the 20th century," Rep. Schiff stated. "Genocide is not a relic of the past, but an ever present threat. Its denial is not only a continuing injury to the survivors, but makes its repetition against another people more likely. It is therefore all the more pressing that the Congress recognize the historical fact of the Armenian Genocide and make clear that we will never be an accomplice to denial."

"Genocide must not be denied. It must be acknowledged for what it is – a scourge on humanity. Official recognition of the Armenian Genocide would represent a courageous new chapter in American foreign policy. With the bold leadership of the current Administration, it is time for the United States to take a stand against Turkish genocide denial," said Rep. Bilirakis.

The Armenian Genocide resolution expresses the sense of the House to: "commemorate the Armenian Genocide

Continued on page 4

## Ara Najarian Selected as Mayor of Glendale



GLENDALE, CA – On Tuesday, April 2, 2019, Glendale City Council Member Ara Najarian was selected as the City's mayor by fellow council members. Najarian takes over the position from outgoing Mayor Zareh Sinanyan. This is Najarian's fourth time serving in the position of mayor.

Najarian was first elected to office in April 2005. During his tenure, he has served as Chair of the Glendale Housing Authority, and the former Glendale Redevelopment Agency.

"I'm truly grateful for the opportunity to serve as Mayor," said Mayor Najarian. "I look forward to working closely with my Council colleagues and staff to keep Glendale the special place that it is."

In addition to serving on the City Council, Najarian is past chair and a current member of the Los Angeles Metropolitan Transit Authority (MTA) Board of Directors, and a vice-chair of the Southern California Regional Rail Authority (Metrolink) Board of Directors. He is also past chair and a member of the San Fernando Valley Council of Governments and serves as a member of the Southern California Association of Governments Transportation Committee. Najarian previously served as a member of the Glendale Community College Board of Trustees from 2003-2005.

He is an attorney and has a bachelor's degree in economics from Occidental College and Juris Doctor degree from the University of Southern California. He is married to Palmira Perez-Najarian, and has two adult children, Alexander and Christopher.

# Prime Minister Nikol Pashinyan Launches Crack-Down on Media Disinformation

YEREVAN (RFE/RL) — Prime Minister Nikol Pashinyan on Thursday threatened to respond "very harshly" to unnamed "former oligarchs" who he said falsely accuse his government of pushing up fuel prices in Armenia.

Pashinyan ordered the National Security Service (NSS) to crack down on anyone who uses mass media or social media to "manipulate public opinion."

"Let nobody succumb to the temptation to feel on their jaw the power of a counterblow by the government enjoying the people's trust," he warned at a weekly cabinet meeting in Yerevan.

Pashinyan was incensed by a newspaper report which claimed that the retail price of pressurized natural gas, used by most vehicles in Armenia, has jumped by around 40 percent because of government plans to introduce new pricing requirements for it.

Under a bill approved by the government in February, motorists would have to pay for every kilogram, rather than cubic meter, of gas purchased by them. Officials argued that the weight of gas is a more objective measure than its volume because the latter can have different degrees of density. The bill has yet to be debated by the Armenian parliament.

Speaking at the cabinet meeting, the head of a government body monitoring the domestic fuel market, Armen Kotolian, said that car owners have paid more for pressurized gas for the last few days because of its increased density. Kotolian insisted that the cost of gas has not gone up in real terms.

Pashinyan seized upon that explanation to denounce "manipulative reports" about the impact of the measure planned by the government. He blamed them on owners of gas stations who he said want to continue to evade taxes.

"If some former oligarchs think that in the existing situation they can enter the field of manipulations, they are mistaken," he said. "I want to warn everyone for the last time not to interpret our civility as weakness. Or else, each of them will get a very harsh counterblow."

The outspoken premier did not name any of those tycoons. The major owners of gas station chains include Gagik Tsarukian, one of the country's richest men who also leads the opposition Prosperous Armenia Party (BHK). The BHK controls the second largest faction in the National Assembly.

Pashinyan went on to order the head of the NSS, Artur Vanetsian, to already launch a crackdown. "True, the freedom of speech and information is guaranteed in our country," he told Vanetsian. "But if some criminal circles spend millions on manipulating public opinion through the press and social media, that's a matter of national security, and I hope that your service will manage to achieve concrete results on this front."

The premier also demanded NSS action against "fake" social media users who he said also openly call for violent actions, including against members of the former Armenian government.

Speaking to journalists after the government session, Vanetsian said that the NSS will be treading "very carefully" on the issue. "If [social media] posts, whether by fake or actual users, do not contain elements of a crime, law-enforcement bodies will have no reason to act," he said.

All forms of libel were decriminalized in Armenia about a decade ago.

# FM Mnatsakanyan: Armenia Will Continue to Advance the Agenda of Genocide Prevention



KIGALI, RWANDA -- On April 5, within the margins of his official visit to Kigali, Foreign Minister Zohrab Mnatsakanyan met with Donatille Mukabalisa, the Speaker of the Chamber of Deputies of Rwanda.

Minister Mnatsakanyan underscored Armenia's commitment to develop sectoral cooperation with the African continent, with this regard, highlighting the platforms of international structures, particularly, the platform of the International Organization of La Francophonie.

Both sides commended the existing good potential for bringing closer the two nations which are geographically far from each other. In this context, the importance of intensifying parliamentary diplomacy and organizing reciprocal visits between Armenia and Rwanda were emphasized.

Presenting the changes in Armenia after the Velvet Revolution and following developments, Minister Mnatsakanyan emphasized that the reforms implemented by the Government on the basis of the broad popular mandate are aimed at strengthening democracy in the country and providing equal opportunities in the economic sphere.

Touching upon the steps taken to prevent crimes against humanity and genocides, Minister Mnatsakanyan noted that Armenia, as a responsible member of the international community, will continue to consistently advance the agenda of genocide prevention. The interlocutors stressed the importance Armenia and Rwanda to undertake joint efforts to advance prevention agenda on international fora.

Donatille Mukabalisa welcomed and highly appreciated Zohrab Mnatsakanyan's participation in the events dedicated to the 25th anniversary of the Rwandan genocide.

Responding to reporters question about the Armenian Genocide in the Ottoman Empire in 1915, the minister reminded that the legal term genocide was developed by Raphael Lemkin, the international community adopted the convention on genocide in 1948 and the Armenian genocide very much the source of examination of why and how these things can happen.

In the minister's words, the denial to recognize genocide, denialism is very painful and haunts generations. " We fail to recognize the damage of the generations when justice is denied. There are over five generations now who are the survivors or the descendants of the survivors. We have seen the depth of the calamity that genocide brings. It happened to the Armenians, followed by Holocaust, the Rwandan Genocide," said the minister, adding "Everytime we stand in the international community and say "never again", but it is not enough. We ask ourselves the question: are we serious, is it enough, have we been paying attention to the signs of genocidal tendencies which can be detected early. Have we been acting early to prevent, or we just let it go to face the calamity."

# Innovate Armenia – the Festival of Ideas & Innovation – Comes to USC on May 18



LOS ANGELES — Innovate Armenia – the festival of ideas and innovation – will once again burst on to the USC Campus.

This year's programming begins with Armenian identity and memory left behind in ancestral Armenian lands, and ends with Armenia, one year after the "velvet revolution".

"This is the year to seek innovative thinkers from around the world because this year the context is very different. Although what continues to be the driving issue is identity — how it's constructed and how it's transmitted — this is the year when a new Armenian government has raised expectations and hopes in Armenia and around the world. And now, many in the Diaspora are asking how to connect, how to belong.

At the same time, there is a huge flow of Armenians to historic Armenian lands in Turkey, in search of that which will help answer other, often more tortuous questions of identity. So, we wanted to include both and we're calling this day-long presentation of research, stories and visuals FROM OLD ROUTES TO NEW ROOTS." stated Salpi Ghazarian, director of the Institute.

The one-of-a-kind festival of ideas, music and action will, as in years past bring together the best from the world of the arts, politics, music, and everything in between from Armenia, Los Angeles, and around the world.

Guests from Turkey, Italy, Armenia and the US will address issues of geography, genealogy, memory, and identity.

From Armenia, high-level government officials and civil society activists will speak about vision and strategy in important policy areas. Scholars and policy experts will join them to analyze goals, challenges, and possible solutions to achieve meaningful reform.

Outdoor Exhibitors

These quick, TED-style talks will take place in USC's historic Bovard Auditorium. Outdoors, chess games with grandmasters, enjoying Armenian craft beers produced in a millennia-old tradition, Armenian coffee tasting while sharing stories about the "Dialects of Coffee" — these and other activities will be available, at the same time.

Professional musicians from around the world, including Armenia and Lebanon will be performing live on the music stage all day.

Nearly 4,000 people from throughout California attended Innovate Armenia in 2017, and another 20,000 watched the day's events Live, both in Armenian and in English.

This is a free event, with no RSVP required. Innovate Armenia is in line with the Institute's mission to make scholarship accessible by showcasing the best of global scholars and researchers to a curious inquiring audience.

## First Armenian Apostolic Church Opens in Kurdistan Region Capital Erbil



ERBIL (Combined Sources) -- Iraqi-Armenians who fled sectarian violence in northern Iraq for the comparative security of the Kurdistan Region capital of Erbil can finally pray in their own place of worship.

The Church of the Holy Cross opened its doors on April 6 in a special ceremony attended by Armenian clergy, including the Primate of the Armenian Diocese of Iraq Avak Asadourian, diplomats, and Kurdistan Regional Government (KRG) officials.

The church has been built and supervised by the KRG's Ministry of Endowment and Religious Affairs and is located in the district of Ankawa, an area known for having a predominantly Christian population.

The KRG paid for the church's construction at a cost of 2.2 billion IQD ($1,845,000).

"The opening of this church itself is laying another foundation stone for a peaceful coexistence of different ethnic and religious groups in the Kurdistan Region," Safeen Dizayee, the spokesperson of the KRG present to represent Prime Minister Nechirvan Barzani at the observance, told Kurdistan 24.

He stated that the culture of tolerance and coexistence is not a political decision, but it rather has deep cultural roots in Kurdistan. Dizayee also said he hoped that displaced Christians could return to their homes in the Kurdistan Region and areas with diverse populations outside Mosul known as the Nineveh Plains.

The Kurdistan Region is home for over 120,000 Christians, distributed throughout the different provinces but with the majority living in Erbil and Duhok. Following the emergence of the Islamic State in Iraq in 2014, most were displaced to areas administered by the KRG, while others fled abroad.

Four of the Kurdistan Region's five Armenian Churches are in Duhok province. An estimated 600 Armenian families live in the Kurdistan Region – 490 of them in Duhok and 110 in Erbil.

## President Sarkissian Visits Jordan River Bank Where Jesus Christ Was Baptized



AMMAN — President of Armenia Armen Sarkissian, who is on a working visit to Jordan, visited the banks of the Jordan River on Friday where Jesus Christ was baptized

The President toured this Christian holy site and left a note in the guestbook. He noted that Jordan's care for this holy place is the best evidence of solidarity and dialogue between civilizations.

President Armen Sarkissian also visited the Armenian St. Karapet Church on the bank of River Jordan and lit a candle.

President Sarkissian is in Jordan to participate in meeting of the World Economic Forum (WEF) on Middle East and North Africa which is taking place in the capital city of Amman between April 5 - 7 to which President Armen Sarkissian is invited as a speaker.

The meeting of the WEF is organized through the assistance and under the high auspices of the King of Jordan Abdullah II bin Al-Hussein and Queen Rania Al-Abdullah.

The meeting will be attended by over 1000 state, business, and civic leaders who will discuss the challenges facing the region. They will talk, in particular, about energy security, use of clean and renewable energy, cybersecurity, and a number of other issues.

President Sarkissian will make a statement in the framework of the New Energy for the Middle East discussions. The President of Armenia will meet also with the Founder and Executive Chairman of the World Economic Forum, a famous economic Klaus Schwab. Armen Sarkissian is a long-time participant of the Forum and has been friends with Klaus Schwab for years meetings with the highest leadership of the country, business circles, and representatives of the local Armenian community.

## 300-Year-Old Armenian Plaque Restored in India




SAIDAPET, INDIA (Armradio) — A 300-year-old Armenian plaque has been recovered in Saidapet, India, The Times of India reports.

The plaque, which commemorates the building of the Marmalong bridge in 1726 — the oldest across the Adyar River — by Armenian merchant Coja Petrus Uscan, had disappeared from sight a few years ago owing in part to neglect and to construction work along the Saidapet Bridge.

But now, the Armenian consulate in the city, in collaboration with the highways department, has managed to restore the plaque in its original spot.

"In February, a group of 20 Armenians had visited the city and they went to see the plaque," the Times of India quotes Shivkumar Eashwaran, honorary consul general of Armenia in Chennai, as saying.

"They were upset that the plaque was virtually underground. There was an outcry in Armenia and in India," he said.

Eashwaran was directed to the highways department, which helped dig out the plaque and restore it to its former glory. Most of the plaque was underground and had to be dug out using a

Continued on page 4



# Belmont, Mass. Library Spotlights Armenian Titles in April

**By David Boyajian**

During April 2019 the Belmont, Massachusetts Public Library is displaying a selection of books, DVDs, and CDs on the Armenian Genocide and Armenian history and culture.

Library Director Peter Struzziero and his staff facilitated the display whose items can be borrowed by patrons.

The library is part of the Minuteman Library Network, a regional consortium of 36 public and 5 college libraries. The Network contains several hundred Armenian titles.

Belmont's April display has so far included The History of the Armenian Genocide by Vahakn Dadrian; Killing Orders by Taner Akçam; Architects of Denial, a film by Dean Cain and Montel Williams; Armenia, the Survival of a Nation by Christopher Walker; Tadem, My Father's Village by Robert Aram Kaloosdian; Neither to Laugh nor to Weep by Abraham and Vartan Hartunian; Goodbye, Antoura by Karnig Panian; Treasures from the Ark: 1700 Years of Armenian Christian Art by Vrej Nersessian; Komitas-Aslamazian, a CD by the Chilingarian Quartet; Armenian Folk Arts, Culture, and Identity by Levon Abrahamian and Nancy & Sam Sweezy; The History of Armenia by Simon Payaslian; The Kingdom of Armenia by M. Chahin; Armenia and Karabagh Travel Guide by Matthew Karanian; The Forty Days of Musa Dagh by Franz Werfel; The Sandcastle Girls by Chris Bohjalian; and other titles.

As items are borrowed, additional ones are added.

A group of local Armenian Americans conceived the idea of a library display for Armenian Genocide Commemoration Month. They suggested nearly forty titles available in the Minuteman Network on topics and genres such as the Genocide, history, religion, art, music, film, food, travel, and fiction.

The group consisted of Jirair Hovsepian, Lucine Kasbarian, Heather Krafian, Marc Mamigonian, Judith Ananian Sarno, and the author.

Hovsepian brought about the town's annual official proclamation on the Armenian Genocide and is an elected member of Belmont's Town Meeting which decides the town's budget and bylaws. Kasbarian is a book and article author and a political cartoonist. Krafian is a board member of the Armenian Relief Society, Eastern Region and co-chairs St. Stephen's Armenian Elementary School's School Committee in nearby Watertown. Mamigonian is the Director of Academic Affairs at the National Association of Armenian Studies and Research. Ananian Sarno is active on town government boards and is an elected member of Belmont's Town Meeting. The author is a freelance journalist and activist.

The Belmont Media Center is producing a community cable television spot about the display, along with a brief interview with this article's author. The spot will be viewable on the center's website.

America's public libraries are, more than ever, actively contributing to community life. They are open to civic sponsorship of and participation in such events and activities as author presentations, lectures, exhibits, films, musical entertainment, and reading groups for both adults and children.

Libraries are a valuable community resource to which Armenian Americans should contribute.

****

David Boyajian's articles are archived at Armeniapedia.org/wiki/David_Boyajian.

# Cadence Ensemble to Perform in Concert as Part of the World Music Series in the Keyboard Concert Series at Fresno State



FRESNO — The acclaimed Cadence Ensemble will perform in concert at 8:00PM on Friday, April 26 in the Concert Hall on the Fresno State campus. The concert, part of the World Music Series of the Philip Lorenz International Keyboard Concert Series, is co-sponsored by the Armenian Studies Program of Fresno State, the Thomas A. Kooyumjian Family Foundation, the Armenian General Benevolent Union, Fresno chapter and the Orpheus Chamber Music Ensemble.

In 2004 five outstanding Armenian instrumentalists—Varazdat Khachumyan, Violin; Hakob Jaghatspanyan, Guitar; Meruzhan Yeganyan, Accordion; Sofi Mikayelyan, Piano; and Gurgen Amiryan, Contrabass—formed the Cadence Ensemble with the intention to promote the music of Argentine composer Astor Piazzolla. Following an enthusiastic response by the public and press, they continually expanded their repertoire and rapidly developed into what they are known for today: one of the world's premier ensembles performing original works and arrangements by classical and contemporary European, Russian, Armenian, and American composers including world music and pop while maintaining an affinity for Piazzolla.

The ensemble has given acclaimed performances in numerous countries around the world in prestigious venues such as the Teatro Colón in Buenos Aires and the Mariinsky Theatre in Saint Petersburg.

General tickets for the Concert are available for $25 per person, for seniors $18 per person, and students $5 per person. Ticket reservations for the Concert may be made by calling 559-278-2337 or calling the Armenian Studies Program at 559-278-2669.

Tickets may also be purchased online at the following website: http://www.keyboardconcerts.com/special-events.aspx. For more information contact the Armenian Studies Program

# Young Professionals Event In Conjunction with Times Square Armenian Genocide Commemoration

FORT LEE, NJ – For the fifth annual year, the Knights & Daughters of Vartan are organizing an event for the New York metro community's Young Professionals on the eve of the Times Square Armenian Genocide Commemoration. The event, titled 100 Years & Beyond, will take place at City Perch and is meant to galvanize the next generation while welcoming networking opportunities in the Diasporan Armenian community.

"We want to create a platform for our generation to feel invested in such a symbolic and significant commemoration for Armenians around the world, said co-chair Anoush Gulian. "By gathering the evening before the Knights and Daughters of Vartan Times Square Commemoration, we are able to enjoy one another's company in a positive ambiance."

The social atmosphere will give community members the chance to connect with one another and in turn build a stronger base of support for Armenian Genocide recognition efforts.

"We are proud to take ownership of this event geared at the younger generation and be given the chance to make our own impact," said co-organizer Anahid Kaprielian.

The Times Square Armenian Genocide Commemoration will take place on Sunday, April 28, 2019, from 2:00 to 4:00 pm, at 43rd Street and Broadway, where politicians and notable figures will champion Armenian Genocide recognition and memorialize the 1.5 million victims who perished between 1915-1923, alongside thousands of supporters.

"It's integral for our organizations to remain connected to our youth and our young professionals," said Hirant Gulian, Chairman Emeritus of the Knights of Vartan. "We have to provide opportunities for them to feel invested in our activities so one day, they, too can take over and continue our important work in the community."

The event will take place on Saturday, April 27, 2019 at 8:00 pm at City Perch Kitchen & Bar, located at 2023 Hudson Street, Fort Lee, NJ. Tickets can be purchased at100yearsandbeyond.eventbrite.com. Donation is $19.15 . For more info, email 100yearsandbeyond@gmail.com.

# Bipartisan Armenian Genocide Resolution

**Continued from page 1**

through official recognition and remembrance; reject efforts to enlist, engage, or otherwise associate the United States Government with denial of the Armenian Genocide or any other genocide; and encourage education and public understanding of the facts of the Armenian Genocide, including the United States role in the humanitarian relief effort, and the relevance of the Armenian Genocide to modern-day crimes against humanity."

"The facts of the genocide were recorded contemporaneously by American diplomats, including the Ambassador to the Ottoman Empire Henry Morgenthau, who transmitted a flood of cables and reports describing the wholesale slaughter of the Armenians," Rep. Schiff and Rep. Bilirakis wrote in a letter to their colleagues.

"Congress passed first of its kind legislation to establish the Near East Relief effort which provided millions of dollars in food and aid to survivors, including tens of thousands of orphans," Congressmen Schiff and Bilirakis stated to their colleagues as only one example of U.S. efforts to help the victims of the Armenian Genocide.

# 300-Year-Old Armenian Plaque

**Continued from page 3**

crane. "It was restored last week. We are building a granite structure around it to protect it," said N Shanthi of the highways department.

"There was a celebration in India and Armenia when we shared pictures of the restoration. The Armenian press has covered it as a matter of pride," says Eashwaran.

The plaque will be officially unveiled in May. The Marmalong Bridge was built at Rs 1 lakh and dedicated to the city. Uscan had decided to settle in Madras after coming to the city in 1724 and paid not only to build the bridge but also for its upkeep.

The Marmalong Bridge was replaced by the Marimalai Adigal Bridge. The plaque has inscriptions in Persian, Armenian and Latin.

Three years ago, history enthusiasts in the city created a Facebook page "Retrieve the Uscan Stone" to draw attention to save the plaque.

# Ամերիկահայ Քանդակագործի Ամբողջական Հաւաքածուն Հանգրուանում է Հայրենիքում

ՊԱՊԻՆ ՄՈՒՐԱԴԵԱՆ

*Ապրիլի 2-ին լրացաւ ամերիկահայ քանդակագործ Խորէն Տէր-Յարութեանի 110-ամեակը: Այդ կապակցութեամբ Հայաստանի ազգային պատկերասրահի Էջմիածնի մասնաճիւղում կազմակերպուել էր յուշ-երեկոյթ:*

*Համերգային ծրագրով հանդէս եկաւ Մակար Եկմալեանի անուան երաժշտական դպրոցի քանոնահարների խումբը: Միջոցառման աւարտին մասնակիցները ծանօթացան Խորէն Տէր-Յարութեանի ստեղծագործական ուղուն եւ կեանքի հետաքրքիր դրուագներին:*

*Խորէն Տէր-Յարութեան թանգարանի էքսկուրսաւար Արփինէ Օհանեանը վառ երազի պէս է յիշում, 1983 թ.-ին՝ առաջին անգամ Հայաստանում՝ Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարանում բացուած Խորէն Տէր-Յարութեանի ցուցահանդէսը: Բազում դպրոցականների պէս ինքն էլ ծնողների տուած օրապահիկի գումարն ամուր ձեռքում պահած վազում էր ամերիկահայ մեծանուն վարպետի հիասքանչ գործերին հաղորդակցուելու: Տասնամեակներ անց, տիկին Օհանեանն ինքն է մեծագոյն սիրով ու նուիրումով դիմաւորում Խորէն Տէր-Յարութեանի արուեստով հետաքրքրուող այցելուներին ու ամէն անգամ նորովի եւ առաւել ջերմեռանդօրէն ներկայացնում իւրաքանչիւր ցուցանմուշ:*

*Խորէն Տէր-Յարութիւնեան. Սփիւռքահայ տաղանդաւոր արուեստագէտներից մէկը Հայ արուեստի պատմութեան մէջ առանձնայատուկ տեղ է զբաղեցնում սփիւռքահայ քանդակագործութիւնը: Հայաստանից դուրս ապրող ու ստեղծագործող բազմաթիւ անուանի արուեստագէտներ հարստացրել են ինչպէս հայ, այնպէս էլ օտար մշակոյթը՝ հիմքում ունենալով ազգային մտածողութիւն եւ հոգեկերտուածք: Այդ երախտաւորների շարքում իր ուրոյն ու պատուարժան տեղն ունի ամերիկահայ քանդակագործ Խորէն Տէր-Յարութեանը (1909-1991):*

*Արուեստագէտն առաջին անգամ Հայաստան է եկել 1970 թուականին՝ Արտասահմանեան երկրների հետ բարեկամութեան եւ մշակութային կապերի հայկական ընկերութեան հրաւէրով:*

*1971 թ.-ին նա ներկայացել է անհատական ցուցահանդէսով, որը տեղի է ունեցել Երեւանի նկարիչների տանը եւ լայն ճանաչում բերեց նրան նաեւ Հայաստանում: 1983 թ.-ին Խորէն Տէր-Յարութեանը հայրենիքին նուիրաբերել է 200-ից աւելի ստեղծագործութիւն: 1994 թ.-ին վարպետի աշխատանքների մշտական ցուցադրութիւն է բացւում Հայաստանի ազգային պատկերասրահի Էջմիածնի մասնաճիւղում: Այստեղ ցուցադրուած են Խորէն Տէր-Յարութեանի քանդակները, Ջամայկայում ապրած տարիներին կատարած գեղանկարչական երկերը եւ տարբեր երկրներում ստեղծուած գրաֆիկական գործերը, որոնք արտացոլում են նրա գեղարուեստական լեզուն, մտածողութիւնը՝ պատկերացում տալով նաեւ նրա արուեստի բազմաժանրութեան մասին:*

*Խորէն Տէր-Յարութեանի ստեղծագործութիւնը շատ ինքնա-*



*տիպ է եւ անհատական: Այդ անհատականութիւնը բխում է նրա արուեստի ազգային էութիւնից, ինչը չի խանգարում այն բնորոշել որպէս համամարդկային նշանակութիւն ունեցող արուեստ:*

*Նրա հոգին անհանգիստ էր, ամէն կերպ ցանկանում էր համաշխարհային հանրութեանը ցոյց տալ, թէ ինչ է կատարուել իր ազգութեան հետ: Հիմնականում այդ նկատառումով 1929 թ.-ից սկսած աշխարհով մէկ նա ունեցել է բազմաթիւ անհատական ցուցահանդէսներ (ԱՄՆ, Ճամայքա, Անգլիա, Շոտլանդիա, Իտալիա, Ֆրանսա), համաշխարհային ճանաչում ստացած արուեստագէտների հետ (Մայոլ, Դեսպիօ, Փիքասօ, Գաբօ, Լիպշից) մասնակցել է համատեղ ցուցահանդէսների, արժանացել է տասնեակ մրցանակների: Խորէն Տէր-Յարութեանի աշխատանքները պահպանւում են աշխարհի տարբեր թանգարաններում եւ մասնաւոր հաւաքածուներում:*

*«Փոքր Մհեր», «Գիւտարար», «Կուղբ» մոնումենտալ գործերը տեղադրուած են Ֆիլատելֆիայում եւ Նիւ Եորքում, իսկ Երեւանում վեր է խոյանում «Վերածնուած Հայաստան» կոթողը:*



## Ժամանակակիցները Խորէն Տէր-Յարութեանի մասին

*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտութեան վաստակաւոր գործիչ, արուեստագիտութեան դոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Յովհաննիսեանը հեռուստահաղորդումներից մէկի ժամանակ ասել է. «Մեր հոգեւոր հայրենիքն այնտեղ է, որտեղ կայ հայ արուեստագէտ»: Այս խօսքերից անմիջապէս յետոյ յիշելով քանդակագործ Խորէն Տէր-Յարութեանին: Պրոֆեսոր Յովհաննիսեանի խօսքերով այս մեծանուն արուեստագէտին աշխարհում շատ լաւ են ճանաչում, իսկ հայրենիքում, ցաւօք, լաւ չգիտեն: Հայաստանում չապրելով նա ամբողջա-*



«Վերածնուած Հայաստան»

*պէս ապրում էր Հայաստանի գաղափարով եւ նա իրեն 200 տոկոսանոց հայ էր համարում: Պարոն Յովհաննիսեանի բնութագրմամբ Խորէն Տէր-Յարութեանի կենսագրութիւնը նման է բոլոր մեծ արուեստագէտների կենսագրութեանը: Նա ծագումով արեւմտահայ էր՝ Խարբերդի նահանգի Աշոտավան գիւղից: Նրա ստեղծագործութիւններում կարմիր թելով անցնում է մանկութեան տարիներին տեսած հայկական ջարդի թեման: Նա իր ստեղծագործական կեանքը սկսել է նկարելով, սակայն հետաքրքիր է, որ նրա նկարներում նկատւում է ապագայ քանդակագործը:*

*ՀՀ գիտութեան վաստակաւոր գործիչ, արուեստագիտութեան վարպետ Հենրիկ Յովհաննիսեանը նկատում է, որ Խորէն Տէր-Յարութեանի ստեղծագործութիւնների թեմատիկայում ամենաարտայայտիչն ու ամենահետաքրքիրն Աստուածաշնչային թեմաներով գործերն են:*

*Առանձնայատուկ յիշում է «Աբրահամի զոհաբերութիւն» եւ «Յոբ» քանդակները: Ապա նշում, որ իր կարծիքով արդարամիտ, արդարասէր, Աստուածասէր եւ Աստծուց պատժուած Յոբի միջոցով*

*Խորէն Տէր-Յարութեանը քանդակել է տառապող եւ Աստծուն սիրող պատժուած մարդու կերպարը եւ յաւելում, որ այս վիճակը ոչ մի նկարում այնպէս չի արտա-*



«Փոքր Միեր»

*յայտուած, ինչպէս Խորէն Տէր-Յարութեանի քանդակում: «Մի պահ մոռանանք գրական հիմքը՝ «Յոբի գիրքը», եւ այս պատկերին նայենք անկախ իր աղբիւրից, ակնյայտ է, որ սա մարդկային տառապանքի մարմնացում է: Իսկ «Աբրահամի զոհաբերութիւնը» մոնումենտալ գործ է. այս հզօրութեան*

*մէջ արտայայտուած է մարդու հաւատը»,- ասում է ՀՀ գիտութեան վաստակաւոր գործիչը:*

*Հենրիկ Յովհաննիսեանն առանձնայատուկ շեշտում է. «Յատկանշականն այն է, որ Խորէն*

*Տէր-Յարութեանը բնորդներ չի ունեցել, օգնականներով չի աշխատել, գծագրեր չի արել, ուրուանկար չի գծել քանդակելուց առաջ, միանգամից, անմիջապէս յարաբերուել է նիւթի հետ:*

*Յաղթահարել է նիւթն ու նիւթի նիւթականացումը եւ միաժամանակ արտայայտել նիւթը՝ այսինքն բնութիւնը: Եւ տպաւորութիւնն այնպիսին է կարծես նրա քանդակները բնութիւնից ծնուած են»:*

*Խորէն Տէր-Յարութեան թանգարանի տնօրէն Յարութիւն Յարութիւնեան էլ ասում է. «Նա իր ստեղծագործութիւններից շատ քիչ է վաճառել կամ նուիրել, նրա նպատակը եղել է հաւաքել եւ տեղափոխել Հայաստան: Միշտ*



«Յոբ»

*կրկնում էր, որ հայրենիքում չապրելով ու նրա կառուցման գործին չմասնակցելով պարտքի զգացողութիւն ունի հայրենիքի հանդէպ: Եւ երբ աշխատանքները բերեց հայրենիք, պարզապէս երջանկութիւնից շողում էր»:*

*Խորէն Տէր-Յարութեանի ազգական Գուրգէն Մուրադեանը հարցազրոյցներից մէկում պատմում է, որ Ֆիլատելֆիայում կանգնեցուած հսկայական 5 մեթրանոց, պղնձաձոյլ «Փոքր Մհեր» արձանը թուրքերն ուզել են պայթեցնել, սակայն չի յաջողուել: Այդ օրուանից տեղի կառավարութեան յանձնարարականով, արձանը հսկւում է ոստիկանութեան կողմից:*

*Գուրգէն Մուրադեանն ասում է, որ Խորէն Տէր-Յարութեանի երազանքն էր «Փոքր Մհերի» արձանի կրկնօրինակը Ծիծեռնակաբերդում տեղադրել: Նշենք, որ այդ արձանի մանրաքանդակը ցուցադրուած է Էջմիածնում՝ Խորէն Տէր-Յարութեան թանգարանում:*

*«Խորէն Տէր-Յարութեանի գործերում նկատելի է, որ ինքը դէմ է ցանկացած բռնութեան. որքան էլ, որ նա ցաւ ապրած արուեստագէտ էր եւ դա ինչ որ ձեւ արտայայտել է իր գործերում, միեւնոյն է նա խաղաղութեան կոչ է անում իր քանդակների միջոցով»,- ասում է արուեստաբան Մարիամ Դաւթեանը:*

## Խորէն Տէր-Յարութեանի խօսքերից

*«Քանդակագործութիւնը ֆի-*

Շար.ը էջ 18

# Յուշերու Արահետներով
# Պատմական Հանդիպում Մը Հնդկաստանի Մէջ



Հնդկաստանի նախագահի Տոքթ. Ռատաքրիշնանի հետ 1963

ԱՍԱՏՈՒՐ ԿԻՒԶԵԼԵԱՆ

Պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, Ամենայն Հայոց կաթողիկոս մը ոտք կը դնէր Հնդկաստանի հիւրընկալ ափերը, 1963-ի Նոյեմբեր 15-ի առաւօտեան ժամը 9:30-ին, երբ Վազգէն Ա. Գահիրէէն կը ժամանէր Տելհիի «Փալամ» օդանաւակայանը:

Հայոց Հայրապետը Հնդկաց աշխարհ կու գար հրաւէրովը Հնդկաստանի եւ Արեւելքի Մալապար քոյր եկեղեցւոյ պետ, Նորին Սրբութիւն Պասիլիոս Բ. Կեվարկեսէ կաթողիկոսին:

Վեհափառի շքախումբին մաս կը կազմէին Երուսաղէմի Հայոց պատրիարք, ամենապատիւ Տ. Եղիշէ արքեպիսկոպոս Տէրտէրեանը, Վրաստանի Հայոց Թեմի Առաջնորդ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տէր Ստեփանեանը, Տ. Արսէն Վրդ. Պէրպէրեանը (գաւազանակիր), «Էջմիածին» ամսաթերթի խմբագիր Արթուն Հատիտեանը, ինչպէս նաեւ Կալկաթայի հայոց հոգեւոր հովիւ Տ. Դաւիթ Վրդ. Սահակեանի գլխաւորութեամբ՝ 14 անձերէ բաղկացած պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէին Պոմպէյի հայոց հոգեւոր հովիւ Տ. Մաշտոց Քհնյ. Թիւֆէնքճեանը, հնդկահայ ծանօթ ազգայիններ Պետրոս Ալեքսեանը (Մայր Աթոռի բարերար), Նեֆթոն Բարսեղեանը, Յովհաննէս Միքայէլեանը, Հայկ Նաճարեանը, Մարթա Կարապետեանը, Կարօ Մարթինը եւ ուրիշներ, որոնք կը ներկայացնէին հնդկահայ եկեղեցիներն ու կազմակերպութիւնները: Նախքան Վեհափառի ժամանումը, շքախումբի անդամներն արդէն հասած էին Տելհի:

Ընդառաջելով Կալկաթայի Ս. Նազարէթ եկեղեցւոյ վարչութեան խնդրանքին, ես եւս եկած էի Տելհի, որպէս թարգման ընկերակցելու համար Վազգէն կաթողիկոսին, Նորին Սրբութեան կատարելիք շրջապտոյտի ընթացքին:

Ի գիտութիւն նշեմ, որ 1957-1964 տարիներուն կը գտնուէի Հնդկաստան եւ կը պաշտօնավարէի Կալկաթայի Հայոց Մարդասիրական Ճեմարանէն ներս, որպէս հայոց լեզուի, գրաբարի, հայ գրականութեան եւ հայոց պատմութեան ուսուցիչ:

Վազգէն կաթողիկոսը թէեւ Մալապար Եկեղեցւոյ կաթողիկոսին հիւրն էր, սակայն Հնդկաստանի կառավարութիւնը Նորին Սրբութիւնը ընդունեցաւ պետական հիւրերուն վերապահուած դիւանագիտական կարգով (protocol):

Նախագահական կարգադրութեամբ, օդակայանին մէջ Վեհափառը դիմաւորեց եւ ողջունեց Հնդկաստանի Կեդրոնական կառավարութեան նախարար, Ա. Մ. Թոմասը: Հնդկաստանի նախագահ Տոքթ. Ռատաքրիշնանը, վարչապետ Նեհրուն, ներքին գործոց նախարար Նանտան, Հնդկաստանի փոխնախագահ Տոքթ. Զաքիր Հուսէյնը եւ պետական բոլոր պաշտօնատարները, ամէնուրեք Վեհափառը ընդունեցան եւ պատուեցին պետական կարգով:

Թէեւ այս յօդուածը նպատակ ունի Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգէն Ա.ի եւ Հնդկաստանի նախագահ Տոքթ. Ռատաքրիշնանի հանդիպման հետ առնչուած դէպքերը ներկայացնել, սակայն անհրաժեշտ կը նկատեմ նախ հակիրճ կերպով անդրադառնալ այն աննախընթաց ընդունելութեան, որուն արժանացաւ Հայոց Հայրապետը Հնդկաստանի մէջ, իր աւելի քան մէկ ամիս տեւող շրջագայութեան ընթացքին:

Վեհափառի Քերալա ժամանման, յատկապէս Քոթայամ կաթողիկոսանիստ քաղաք մուտքին առթիւ կազմակերպուած ընդունելութիւնն ու շքեղ հանդիսութիւնները նոյնիսկ ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ածականը անկարող է ամբողջութեամբ բնութագրել...:

Ի գիտութիւն նշենք, որ Քերալա նահանգը, որ ունի 14.992 քառակուսի մղոն տարածութիւն, կը գտնուի Հնդկաստանի հարաւը:

Այդ տարիներուն Քերալան ունէր շուրջ 15.300.000 բնակիչ:

Վեհափառը իր շքախումբով էրնաքուլամ քաղաքէն Քոթայամ կը մեկնի 19 Նոյեմբերին: Շուրջ 15 քմ դրախտանման կանաչազարդ դաշտերով, անտառներով, լիճերով եւ գետերով շրջապատուած ճամբու ամբողջերկայնքին, բազմահազար ժողովուրդ (տեղական թերթերու համաձայն աւելի քան 250.000), ժամերով կը սպասէ Վեհափառի շքախումբի անցքին:

Քոթայամէն 3 քմ հեռաւորութեան վրայ կազմուած է հսկայական թափօր: Գլխաւորպողոտաներու, փողոցներու, խանութներու, մայթերու երկայնքին, տանիքներու եւ պատըշգամներու վրայ հաւաքուած է ծովածաւալ բազմութիւն:

Թափօրը մուտք կը գործէ Քոթայամ: Կը պայթի ուրախ բացագանչութիւններու, փոթորկայոյզ ծափերու, կեցցէներու որոտը: Հազարաւոր դպրոցականներ ծաղիկներ շաղ կու տան Վեհափառ Հայրապետի ճամբուն վրայ: Ջայնասփիւռը անընդհատ մալայալամերէն լեզուով կը կրկնէ՝ «Ջայ, ջայ կաթողիկոս» («Կեցցէ, կեցցէ կաթողիկոսը»), իսկ ժողովուրդը կը կրկնէ նոյնը:

Տեղական լրատուամիջոցներուն համաձայն, Քերալա նահանգը իր պատմութեան մէջ նման երեւոյթի առաջին անգամ ականատես կ'ըլլար...:

***

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգէն Ա.ի եւ Հնդկաստանի նախագահ Տոքթ. Սավրեփալի Ռատհաքրիշնանի հանդիպումը տեղի ունեցաւ Նորին Սրբութեան Տելհի ժամանած օրը, 15 Նոյեմբեր 1963-ին, ժամը 15:15-ին:

Նախագահական պալատի մուտքին, Վեհափառը դիմաւորուեցաւ զինուորական պատիւներով եւ առաջնորդուեցաւ ընդունելութեան դահլիճ, նախագահի փրոթոքոլի պատասխանատու պաշտօնատարին ընկերակցութեամբ:

- Խնդրեմ, յայտնեցէք Վեհափառին, ըսաւ պաշտօնատարը, որ հինգ վայրկեան յետոյ, երբ դիմացի դռնէն ներս մտնէ նախագահը, բոլորս ոտքի կը կանգնինք: Նախագահը երկու քայլ դէպի Վեհափառը կ'առաջանայ, իսկ Նորին Սրբութիւնն ալ, իր հերթին, երկու քայլ կ'առնէ դէպի նախագահը, որպէսզի անոնք հաւասար գետնի վրայ ողջունեն զիրար:

Դուք, որպէս Վեհափառի



Վազգէն Ա.ի հետ Կանտիի յուշավայրին մէջ - 1963թ.

թարգմանը, միշտ կը հետեւիք Նորին Սրբութեան: Վեհափառը կը բազմի այս բազկաթոռի աջին, նախագահը կը գրաւէ ձախ կողմը, իսկ դուք՝ կը նստիք բազկաթոռին ետեւ դրուած աթոռին վրայ եւ մեղմ ձայնով, առանց ձեռքի շարժումի, կը թարգմանէք անոնց խօսակցութիւնը:

Ճիշդ հինգ վայրկեան յետոյ նախագահը հիւրասենեակ մտաւ, բոլորս ոտքի կանգնեցանք եւ երբ, համաձայն տրուած ցուցմունքին, Նորին Սրբութիւնը կը պատրաստուէր իր առաջին քայլը առնելու, նախագահը անտեսելով դիւանագիտական ընդունուած ամէն կարգ, գրեթէ վազելով եկաւ դէպի Վեհափառը, որ՝ «դուն անգլերէն չես գիտեր» ըսող նայուածք մը նետեց իմ ուղղութեամբս, իսկ ես նոյն հայեացքը նետարձակեցի դէպի պաշտօնատարը, որ, իր հերթին, այնպիսի նայուածքով մը նայեցաւ ինծի, որ միայն «Ի՞նչ կրնամ ընել, նախագահը եթէ ուզէ վազել՝ կը վազէ», կրնայ նշանակել...:

Նախագահն ու Վեհափառը ողջագուրուած էին արդէն, երբ Նորին Գերազանցութիւնը, նկատելով որ կը հետեւիմ կաթողիկոսին, հարցուց.

- Վեհափառին թարգմանը դո՞ւք էք:

- Այո, Ձերդ Գերազանցութիւն:

- Խնդրեմ, հարցուցէք Նորին Սրբութեան, իր հետ Երեւանի ռատիոյի անեքթոտներ բերա՞ծ է:

Վեհափառը շփոթած ու զարմացած նայեցաւ ինծի: Անոր նայուածքին մէջ կար ե՛ւ կասկած, ե՛ւ անվստահութիւն իմ թարգմանչական կարողութեանս հանդէպ:

- Միթէ Նորին Գերազանցութիւնը Երեւանի ռատիոյի անեքթո՞տ գիտէ, հարցուց Վեհափառը:

- Մեծ հաւաքածոյ ունիմ, ըսաւ նախագահը եւ շարունակեց՝ հրահանգած եմ Մոսկուայի մեր դեսպանին, որպէսզի ամէն շաբաթ Երեւանի ռատիոյի նոր անեքթոտները հեռագրէ ինծի: Կրնա՞մ հատ մը պատմել Վեհափառին:

- Անշուշտ, ըսաւ Վեհը:

- Քաղաքացի մը կը հարցնէ Երեւանի ռատիոյին.

«Ի՞նչ է տարբերութիւնը կապիտալիզմի եւ կոմունիզմի»:

- Ընկեր, որպէս կոմունիստ, դուն պէտք է գիտնաս տարբերութիւնը. «Կապիտալիզմ կը նշանակէ մարդու շահագործումը մարդու կողմէ»:

- Իսկ կոմունի՞զմը որն է, կը հարցնէ քաղաքացին:

-Կապիտալիզմի շրջուած ձեւն է, կ'ըլլայ խօսնակին պատասխանը...:

Երբ նախագահն ու Վեհափառը վերջապէս գրաւեցին բազկաթոռին վրայ իրենց նստատեղերը, Նորին Սրբութիւնը հետեւեալ խօսքերով ողջունեց նախագահը.

- Ձերդ Գերազանցութիւն, կու գանք Ս. Էջմիածինէն, որ Դ. դարէն եղած է հայ ժողովուրդի քրիստոնէական հաւատքին կեդրոնը, ուրկէ ողջոյն եւ օրհնութիւն կը բերենք Ձեզի, Հնդկաստանի բարեկամ կառավարութեան եւ հնդիկ ազնիւ, խաղաղասէր եւ լուսաբաղձ ժողովուրդին: Միջանկեալ ըսեմ, որ 15 Նոյեմբերը Հնդկաստանի մէջ «Լոյսի Տօն» է, «Տիվալի» (հայերէն՝ տիւ, լոյս, ցերեկ): Այդ հանգամանքը նկատի ունենալով, Վեհափառը շարունակեց իր խօսքը.

-Մեր Հնդկաստան ժամանումը կը զուգադիպի հնդկական Լոյսի Տօնի հանդիսութիւններուն: Այս առիթով ընդունեցէք մեր ջերմ շնորհաւորութիւնները: Մեր մաղթանքը ու աղօթքն է, որ Լոյսի Աստուածը Ձեզի արեւշատութիւն պարգեւէ եւ Ձեր մեծ երկիրն ու ժողովուրդը պահէ լոյսերու մէջ, պայծառ, միշտ խաղաղ ու բարգաւաճ:

Նախագահ Տոքթ. Ռատաքրիշնան հնդիկ ժամանակակից մեծագոյն մտաւորականներէն մէկն է, հեղինակ՝ փիլիսոփայական բազմաթիւ գիրքերու:Ան միջազգային փիլիսոփայական շրջանակներու մէջ ճանչցուած եւ գնահատուած հեղինակութիւն մըն է:

Նախագահը իր պատասխան խօսքին մէջ շնորհակալութիւն յայտ-

Շար.ը էջ 19

# ՍԼԱՔՆԵՐ (6)
# «Դրութեան Մէջ Մտնող» Բժիշկը

ՎՌԱՄ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ




*Քանի մը շաբաթ յետաձգուելէ ետք, ի վերջոյ կարգը եկաւ «դրութեան մէջ մտնող» բժիշկին:*

*Հաւանաբար աւելի նպատակայարմար եւ արդար պիտի ըլլար ըսել՝ «բժիշկներուն», որովհետեւ, վստահ եմ, մէկէ աւելի է թիւը այն բժիշկներուն որոնք 100, 200 տոլարի «շնորհակալութեան» դիմաց՝ կը խախտեն թէ՛ ինքնաշարժ վարելու ամէնակարեւոր օրէնքներէն մէկը եւ թէ՝ կը վարկաբեկեն իրենց անունն ու ասպարէզը, միաժամանակ՝ կը դրժեն Հիպոկրատիիրենց երդման սկզբունքները:*

*Նախ՝ յիշենք որ Քրիստոսէ առաջ 460-370 թուականներուն, Կոս կղզիին մէջ ապրած յոյն բժիշկ մըն էր Հիպոկրատը, որուն հեղինակած «բժշկութեան երդում»ը կատարելով, բժշկութեան ասպարէզ մուտք գործող անձը - այլ սկզբունքներու կողքին- կը խոստանայ օգտագործել առողջապահական ա՛յն միջոցները, զորս, ըստ իր հնարաւորութեան եւ դատողութեան, ինք կը համարէ իր հիւանդներուն օգտին, եւ ձեռնպահ պիտի մնայ այն բոլորէն՝ որ վնասակար է եւ չարիք:*

*Թէ՝ ներկայիս շուկան ողողած բժիշկներէն քանի՞ն տակաւին կը յիշէ այդ երդումին բովանդակութիւնը, եւ յիշողներէն քանի՞ն կը գործադրէ յատկապէս վերջին նախադասութիւնը՝ կը թողում ընթերցողին դատողութեան: Իսկ ինչ կը վերաբերի «հիւանդներուն օգտին» հասկացողութեան, այդ մէկն ալ -շատ հանգիստ խղճով- շրջադարձուած է, եւ ուրեմն, յատկապէս ա՛յս օրերուն, այդ խեղճ Հիպոկրատին աղաւաղուած երդումը պէտք է ընդունիլ այսպէս.- «բժշկութեան ասպարէզ մուտք գործող անձը - մէկզի դրած ամէն սկզբունք- կը խոստանայ օգտագործել առողջապահական ա՛յն միջոցները, զորս, ըստ իր հնարաւորութեան եւ դատողութեան, ինք կը համարէ ի՛ր օգտին, ուստի արդար կը համարէ այդ նպատակին համար օգտագործել իր հիւանդները, անտեսելով այդ միջոցներուն հետեւանքով՝ հիւանդներուն կրելիք ֆիզիքական վնասներն ու առհասարակ չարիքը»:*

*Խօսքը՝ էջերով ցանկագրուած դեղատոմսերուն մասին չէ միայն. բոլորս ալ գիտենք, որ եթէ ոեւէ անհատ այդ դեղերով լեցնէ իր ստամոքսը՝ ինքզինք թունաւորելու կողքին՝ իբր թէ իր «առողջութեամբ մտահոգ» բժիշկին եւ «դեղագործ» տիտղոսը կրող գործարարին գրպանը յաւելեալ տոլարներով պիտի լեցնէ...: Պարզ է արդէն թէ ինչքան նուազեցնենք մեր առողջութիւնը միայն դեղերուն վստահելու սովորութիւնը այդքան կը բարելաւենք մեր սեփական առողջութիւնը, մէկ կաթիլով գոնէ կը խնայենք երկրին առողջապահական պիւտճէէն եւ միաժամանակ՝ օգնած կ՚ըլլանք ովկիանոսի բնակիչ կենդանիներուն որոնց կեանքը առատօրէն կը թունաւորուի պէտքարանի ծակով դէպի ովկիանոս ճամփայ ելած դեղերէն: Եւ յետոյ, այդ ձուկերն ու ովկիանոսի բնակիչները մեր ճաշասեղանին կը յայտնուին:*

*Այդ բոլորին հետ, այսօրուան խօսքը մասնաւորաբար կը վերաբերի մեր համայնքին մէջ աչք ծակելու չափ ընդհանրացած Հաշմանդամի Ազդագիրն է («հէնտիքէփ բլէքըրտ»): Այս պարագան իրեն մեղսակից ունի Հիպոկրատին երդումը թուլթակած բժիշկներ, որոնք, ինչպէս ըսինք սկիզբը, 100, 200 տոլարի «շնորհակալութեան» դիմաց՝ իրենց հեղինակաւոր թելադրանքը ընել Ինքնաշարժներու Վարչութեան (Տի. էմ. Վի.ին) որ այդ «հաշմանդամ»ին Ազդագիր շնորհէ:*

*Կարծէք չի բաւեր օրական 30-40 հիւանդ «տեսնել»ը, անոնց առողջապահական ապահովագրութենէն (յաճախ՝ Մէտիքէլ եւ Մէտիքէր) անհաշիւ գումարներ չորթելը, անոնց համար նշանակուած դեղագրերէն շահաբաժին վերցնելը, անկուշտ բժիշկներ գտած են եկամուտի նոր աղբիւր մը՝ Հաշմանդամի Ազդագիր: Արդէն իսկ 4 ազգակից բժիշկներ հայ հասարակութեան մէջ հանրածանօթ դարձած են այս Ազդագրերը «ծախել»ու գործարքին մէջ:*

*Եւ իրենց գոյներուն համաձայն՝ այդ Ազդագրերը գին ունին: Անշուշտ՝ կարմիր Ազդագիրը կապոյտէն «աժան» է, որովհետեւ ժամանակաւոր է: Վա՜յ քեզ, խեղճ Հիպոկրատ...:*

*Այս մասին գրելու գաղափարը առաջին անգամ ծնաւ քանի մը ամիս առաջ, Կլենտէյլի դրամատուներէն մէկուն կանքառին մէջ: Անամպ, պայծառ առտու մը, աշխատանքիս չսկսած՝ դրամատան մօտէն անցած պահուս նկատեցի որ կանքառը գրեթէ պարապ էր: Հակառակ անոր որ իմ նպատակս օրուան երկրորդ կէսին դրամատուն երթալն էր, այս բացառիկ առիթը փախցնելը յանցագործութեան համազօր համարելով՝ ինքնաշարժս կանգնեցուցի կանքառին մէջ եւ սկսայ քալել դրամատան դրան ուղղութեամբ: Հազիւ կանքառած 3 ինքնաշարժներու ետեւէն անցած էի, սեւ պատուհաններով, սեւ Մերսէտէս Ճի-Ուէկընի մը կայծակնային արագութեամբ սուրաց առջեւէս, եւ դժուարութեամբ կանք առաւ դրամատան դրան ամէնէն մօտիկ՝ հաշմանդամներուն յատկացուած տարածութեան մը մէջ: Պահ մը մտածեցի որ արդեօ՞ք խեղճ (հաւանական) հաշմանդամ վարորդը զինք հետապնդող ահաբեկիչներէ փախուստ կու տար, կամ՝ վայրկեան առաջ պէտք էր տոպրակներով դրամ հասցնէր դրամատուն որ գումարը շուտով փոխանցէին Հայաստան, բաժնելու համար 60-70 հազար ծայրահեղ աղքատներուն...:*

*Այս յուզումնախառն զգացումներով տարուած՝ պահ մը մոռցայ որ կրնայի Ճի-Ուէկընին անիւներուն տակ ճզմուած ըլլալ, եւ փոխարէնը՝ ուզեցի արագ հասնիլ այդ սեւ, հսկայ տուփին, բանալ հաշմանդամ-կարծած վարորդին դուռը, զինք հրաւիրել դուրս եւ կա՛մ ձեռքը ամուր սեղմել եղբայրաբար, կամ ալ՝ ճակատը համբուրել հօրեղբայրաբար...:*

*Ես չհասած՝ դուռը բացուեցաւ: Շուրջ 4 ոտք հասակով, ոչ աւելի քան 100 փաունտ կշիռքով, 30 տարեկանի շուրջ ուրուական մը, որ շատ նման էր Հալոուինի կախարդին, ցատկեց ինքնաշարժէն վար: Երկար, կաղապարուած մազերէն մինչեւ բարձրակրունկ կօշիկները՝ սեւերու մէջ այլանդակուած այս կերպարը «շրխկացուց» դուռը, եւ «արագացրո՛ւ», «արագացրո՜ւ», բղաւելով հասաւ ուղեւորին կողմը եւ սկսաւ դուրս քաշքշել հաւանաբար-4-տարեկան մանչուկին, որուն լացախառն ճիչը միացաւ կնոջ բղաւիւնին:*

*Տեսնելու բան էր: Եւ ապշելու: Եւ չուարելո՛ւ: Չես գիտեր արդեօք խնդա՞ս, լա՞ս, անտեսես անցնի՞ս, կոյր ու համր ձեւանա՞ս: Քայլերս դանդաղեցուցի՝ տեսնելու համար թէ այս անշնորհք կացութիւնը ի՞նչ վախճան պիտի ունենայ: Արագ շարժումներով, մանչուկին գրեթէ շպրտեց գետին, մագլցեցաւ բարձրաբերձ ինքնաշարժէն ներս եւ հայելիին բռնիչէն կախեց Հաշմանդամի Ազդագիրը: Ա՛ռ քեզի բարոյապէ՛ս հաշմանդամ մը: Ցատկեց վար, իջաւ պարզ մահկանացուներուս հաւասար, Հըրմիզ վաճառանիշի թանկարժէք պայուսակը -որուն համար անմեղ կոկորդիլոս մը զոհուած էր վստահաբար- եւ բանալիներու տրցակը՝ մէկ ձեռքին, միւսով՝ մանչուկին քաշելով, մտաւ դրամատուն: Քանի մը քայլ ետք՝ ես եւս մտայ:*

*«Արագացրո՜ւ, քո Ֆրափփուչինոյի խաթեր՝ իմ վարսաւիրից եմ ուշանում», «արագացրո՛ւ ասեցի», հրահանգները կ՚արձագանգէին դրամատան ամբողջ տարածքին, մարաթոնեան վազքի ոտնաձայներուն հետ, արժանանալով դրամատան պաշտօնեաներուն եւ շարքի կեցած յաճախորդներուն հեգնական ժպիտներուն եւ մրմրթոցներուն: (Դրամատան միւս կողմը Սթարպաքսի կրպակն էր): Բայց ինչպէ՞ս մեղադրել այս զոյգը: Մեր համայնքին գոյատեւման պայքարին նախապատրաստուող փոքրիկը իր առաւօտեան սուրճին պէտք ունէր, եւ համայնքին պատիւը պաշտպանելու սրբազան նպատակին համար ամէն զոհողութեան երթալով՝ իր զաւկին բարոյական դաստիարակութիւն ջամբող խեղճ մայրն ալ՝ իր ...«վարսաւիր»ին: «Արի՛, Վարդապետ, ու մի՛ հայհոյիր», ըսի ինքնիրենս եւ սկսայ մտածել թէ ո՞վ էր արդեօք այս երեւոյթին (երեւոյթներուն) պատասխանատուն: Այդ ուրուականին ծնողնե՞րը. իր ծննդավայր-դրախտավա՞յրը. իր ամուսի՞նը (եթէ ունի). ուսուցիչնե՞րը (ի վերջոյ, ինչ-որ «կարմիր դիպլոմով» աւարտած մէկը կրնար ըլլալ, անկախ՝ մնացեալ ամէն բանէն). զինք գրկաբաց ընդունած այս «այլասեռող» Ամերիկա՞ն, ուր եկանք կամաւոր բայց կը բողոքենք ամէն օր. «ամէն բան ընդունելի է» ըսող մեր միջավա՞յրը. այս ուրուականին շրջապա՞տը, որ «ես եմ, դու, եւ Նա՛», պիտի ըսէր Գէորգ Էմին:*

*Եուրի՛քա՜: Պատասխանը գտայ: Մասամբ՝ ե՛ս էի պատճառը: Այո՛: Ե՛ս եւ իմ նմանները. որովհետեւ եթէ ես-մենք-միջավայրը սխալի մը, անվայել երեւոյթի մը ականատես կ՚ըլլանք՝ իրաւունք չունինք լուռ անցնելու: Չէ՞ր կրնար պատահիլ որ այդ կինը չէր անդրադարձած իր ըրածներուն: Եւ յետոյ, չէ՞ որ Ափրիկեան ասացուածքին համաձայն՝ ամբողջ գիւղ մը (միջավայր մը) պէտք է մասնակցի մանուկի մը դաստիարակութեան...: Այս մտմտուքներուն մէջ էի, երբ ասպատակումի հետզհետէ մօտեցող ձայներ սկսան բռնաբարել ականջներս:*

*Ֆրափփուչինոյով յորդող գաւաթը ձեռքին՝ մեր համայնքը ապագային ներկայացնելու կոչուած փոքրիկը հազիւ կրնար հասնիլ դրամատան սրահը դարձեա՛լ ոտքին տակ առած եւ Սթարպաքս-դրամատուն-կանքառ արշաւը աւարտող մօրը:*

*Հաւաքական հայհոյանքի նման միահամուռ եւ լիաթոք ծիծաղի արժանացաւ այս արշաւը:*

*Չի կրցայ մնալ հանդիսատեսի վիճակին մէջ: Դուրս ելայ շարքէն եւ հասայ ա՛յն պահուն երբ ուրուականը փոքրիկին կը հրմշտկէր ինքնաշարժին դուռէն ներս: «Ներողութիւն, տիկի՛ն» ըսի, եւ հազիւ աչքին ծայրով իր ջղային նայուածքին արժանացած՝ շարունակեցի. «այս տարածքը վերապահուած է հաշմանդամ վարորդներուն, իսկ դուք, փա՜ռք Աստուծոյ, հաշմանդամ չէք. ճիշդ չէ՞ր ըլլար որ քովի տարածքին կանգնեցնէիք ձեր մեքենան. թէ՛ իսկական հաշմանդամ մը կրնար հոս գործածել եւ թէ՛ այս փոքրիկը լաւ բան մը սորված կ՚ըլլար որ ուրիշին իրաւունքը չեն շահագոր...»: «Ի՞նչ ես խօսո՜ւմ. քե՛զ ինչ. դո՛ւ ով ես», մռնչիւնով զիս ընդհատեց այդ 4 ոտք հասակով լպիրշ ուրուականը, եւ «ես հէնտիքէփի փլաք ունեմ» պոռալով՝ մագլցեցաւ Ճի-Ուէկընէն վեր: «Բայց քո ո՞րտեղն է հաշմանդամ», բարձրաձայնեցի եւ նախքան դուռը գոցելը՝ աւելցուցի՝ «քո ուղե՛ղն է հաշմադամ. եւ բարոյականը»: Սուրացող սեւ տուփին առջեւի սեւ պատուհանէն սեւածածկ թեւ մը յայտնուեցաւ եւ միջնեմատ մը օդին մէջ տնկուած մնաց մինչեւ դրամատան կանգառէն ինքնաշարժին դուրս ելլելը...: Չէի սխալած: Այնտե՛ղ էր իր բարոյականը...:*

*Որոշեցի անպայմա՛ն դաս տալ այս «լաչառ»ին: Ինքնաշարժին թիւը, տուեալները, վարորդին նկարագրութիւնը եւ դէպքին վայրը տեղեկացուցի Ինքնաշարժներու Վարչութեան գրասենեակի անձնակազմին որպէսզի իր «հէնտիքէփի փլաք»ին «հարցերը լուծեն» իրեն*

Շար.ը էջ 18

# Ի՞նչը կը Դրդէ Մեզ Դէպի Ճիշդ Մարդու Գիրկը

## Պատճառներ, Որոնցմով Մենք Կ'ընտրենք եւ Կ'ընտրուինք

Սիրահարուածութիւնը բարդ կառուցակազմ է, սակայն գիտնականները կրցած են գլուխ հանել անկէ:

– Ժամանակ ուժի եւ ժամանակ քնքշութեան համար: Ինչպիսի տղամարդ ալ դուք ընտրէք՝ նիհար ուսանող բանաստեղծ, որուն հետ ծանօթացած էք գրադարանի մէջ, թէ մարզասրահներէն մէկուն, կը պարզուի, որ ատիկա ոչ միայն կախուած է ճաշակի հետ, այլեւ՝ դաշտանային շրջանի: Ձուահատման ընթացքին կանայք անգիտակցաբար կը նախընտրեն ուժեղ երիտասարդները. անոնց ենթագիտակցութիւնը կը հասցնէ հաշուենկատօրէն հասկնալու, որ նման տղամարդոցմէ կը ծնին ամուր, առողջ զաւակներ: Իսկ դաշտանային օրերուն կանանց կը գայթակղեն աւելի փափուկ, բարի տղաները, որոնք ունակ են հասկնալու եւ կարեկցելու:

– Սէր եւ այլ աղէտներ: Եթէ տղամարդը նոր վերապրած է ճնշման որեւէ իրավիճակ, հաւանականութիւնը, որ ան պիտի ձգտի դէպի ձեզի՝ կը բարձրանայ: Հետազօտողները ըրած են անսովոր փորձարկում մը: Անոնք կ'առաջարկէին մասնակիցներուն անցնելու կիրճի վրայէն: Մէկ կիրճը ամուր էր, միւսը՝ շարժող: Կիրճի այն կողմը անոնց կին մը կը սպասէր: Անցնելով կիրճը՝ տղամարդիկ կրնային զայն ժամադրութեան հրաւիրել կամ չհրաւիրել:

Կինը աւելի շատ ժամադրութեան առաջարկ կը ստանար այն տղամարդէն, որ, յաղթահարելով վախը, անոր մօտ կ'երթար: Խնդիրը վերապրած ճնշման մէջ է, քանի որ մարմնական նշանները կը համընկնին սեռային գրգռուածութեան վիճակին հետ եւ ուղեղը միշտ չէ որ կը տարբերէ մէկը միւսէն:

– Ինչո՞ւ աւելորդ գաւաթը ուրիշները աւելի գեղեցկադէմ կը դարձնէ: Որոշ գիտնականներու կարծիքով՝ այստեղ խնդիրը հարբածութեան ժամանակ աւելի ցած պահանջներ ունենալու մէջ չէ: Կենսաբանութեան տեսանկիւնէն, գեղեցկութիւնը համաչափութիւնն է: Համաչափ դէմքով մարդու մօտ ծինային հիւանդութիւններու հաւանականութիւնը աւելի քիչ է, որ կը նշանակէ, որ առողջ ժառանգներ ունենալու հաւանականութիւնը աւելի շատ է:

Ալքոհոլը կը խանգարէ նկատելու անհամաչափութիւնը շրջապատի արտաքինին մէջ, այդ պատճառով տղան կամ աղջիկը կը սկսին աւելի գեղեցիկ թուիլ, քան սթափ ժամանակ:

– Ո՞վ յօրինած է տղամարդու կատարեալ կազմուածքը: «Կարեւորը ոչ թէ արտաքինն է, այլ՝ ներքին աշխարհը:

Որո՞նք հնարած են գեղեցկութեան կանոնները», կ'ըսենք մենք: Ատոնք, սակայն, մեզի կը յուշեն բնութիւնն ու բազմանալու ձգտումը:

Կը պարզուի, որ կիներուն մեծամասնութիւնը նոյնպէս ուշադրութիւն կը դարձնէ տղամարդու կոնքերուն: Ատոր պատճառը այն է, որ մենք այդ կերպով կը գնահատենք անոնց թեսթոսթերոնի մակարդակը: Որքան անոնց մօտ այդ հորմոնը շատ է, այնքան աշխուժօրէն անոնց մարմնին մէջ կ'այրի ճարպը, իսկ հակառակ պարագային անիկա տեսանելի է իրանի եւ կոնքերու հատուածին:

– Դուք նման էք անոր մայրիկին: Այո՛, ատիկա սխալ չէ:

Տղամարդը հակուած է ընտրելու այնպիսի կին, որուն դիմագիծերը ան կը նմանցնէ մանկութենէն յիշուած դէմքին: Գոյութիւն ունի «սեռային պատկերում» հասկացութիւն:

Մանկութեան ժամանակ, վերացական պահերուն, մենք կը «լուսանկարենք» կերպարը, որ մեզի համար կը դառնայ կատարեալ:

Զարմանալի չէ, որ յաճախ այդ կերպարը կը դառնայ մեզի համար կարեւոր մարդ մը, ան, որ մեր կողքին էր:

– Գերող բոյր: Հետազօտութիւնները բացայայտած են աֆրոտիզիակներու ախոյեանը: Բոյրը, որ կը գերէ տղամարդոց, նարդոսի եւ դդումի խառնուրդն է: Իսկ կիներուն կը գերէ տղամարդու անուշահոտը՝ վարունգի եւ մատուտակի բոյրով:

– Կինը կարմիրով: Ատիկա պարզապէս գեղեցիկ կերպար չէ երգի մէջ: Կարմիր զգեստը նախնադարեան բնազդներու վրայ խաղ է եւ լաւ կը բարձրացնէ հաւանականութիւնը, որ տղամարդոց հայեացքները գամուած պիտի ըլլան անիկա կրողին վրայ:

# Յոռետեսը Վարդի Գեղեցկութիւնը Տեսնելու Փոխարէն՝ կը Հաշուէ Անոր Փուշերը

Մարդիկ կ'ապրին այնպիսի աշխարհի մէջ, զոր կը ստեղծեն իրենք իրենց համար: Ամէն ինչ կախուած է իրենց գլխուն մէջ եղած մտքերու վիճակէն:

Կան մարդիկ, որոնք դժբախտ են իւրաքանչիւր իրավիճակի մէջ: Այդպիսի մարդոց մօտ խելքի որոշակի որակը ամէն ինչ կը վերածէ դժբախտութեան: Եթէ դուք անոնց պատմէք վարդի գեղեցկութեան մասին, անոնք անմիջապէս կը սկսին հաշուել անոր փուշերը: Եթէ դուք անոնց ըսէք, որ հիանալի առաւօտ է, անոնք զարմացած կը նային ձեզի ու կ'ըսեն. «Ընդամէնը մէկ ցերեկ՝ երկու մութ գիշերներու միջեւ... Եւ ի՞նչ կայ այստեղ հիասքանչ: Ինչո՞ւ այդքան հմայուած էք իրմով»:

Բայց կարելի է նոյն փաստին նայիլ դրական դիրքերէ: Եւ այդ ժամանակ պիտի տեսնէք, որ իւրաքանչիւր գիշերը շրջապատուած է երկու ցերեկով: Եւ, ով հրաշք, վարդը գեղեցիկ է անգամ այդքան փուշերու մէջ:

Ամէն ինչ նոյնն է, ամէն բան նախկինի պէս է: Ամէն ինչ կախուած է ձեր գլխուն մէջ եղած մտքերէն: Միլիոնաւոր մարդիկ ինքնակամ իրենց վրայ կը դնեն մեծ բեռներ: Հասկնալի է, որ անոնց ողջ կեանքը մեծ բեռ է: Այդպիսին է անոնց մօտեցումը. անոնք կը կեդրոնանան ամէն բացասականի վրայ: Անոնք կը չափազանցեն ժխտականը: Ատիկա կեանքի նկատմամբ անառողջ վերաբերմունք է: Բայց անոնք կը շարունակեն դատել հետեւեալ կերպով. «Ի՞նչ կրնանք ընել: Այդպիսին է աշխարհը...»:

Ոչ, աշխարհը այդպիսին չէ: Աշխարհը բացարձակապէս չէզոք է: Այնտեղ կան վարդեր եւ փուշեր, գիշերներ եւ ցերեկներ: Այստեղ հարցը ձեր մէջ է, եւ դուք կ'որոշէք, թէ որ մէկը պէտք է ընտրել: Եթէ դուք որոշած էք ընտրել վատ կողմը, ուստի դուք պիտի ապրիք այս աշխարհին մէջ այնպէս, ինչպէս որ ընտրած էք, եւ պիտի գտնուիք ձեր իսկ ընտրած աշխարհին մէջ: Այսպիսով, մարդիկ նոյն Երկիր մոլորակին վրայ կը ստեղծեն է՛ւ դրախտը, է՛ւ դժոխքը:

Կայ երկու հնարաւորութիւն: Քաղաքական միտքը կ'ըսէ. «Փոխէ աշխարհը», իսկ կրօնական միտքը՝ «Փոխէ մտքերուդ վիճակը»: Կրօնն ու քաղաքականութիւնը տրամագծօրէն հակադիր բաներ են: Հաւանականութիւն կայ, որ օր մը գիտութիւնն ու կրօնը պիտի միաւորուին, քանի որ կեանքի հանդէպ անոնց մօտեցումները չափազանց մօտ են: Հաւանաբար անոնք սոսկ մղուած են տարբեր կողմեր. գիտութիւնը կը հետազօտէ արտաքինը, իսկ կրօնը՝ ներքինը: Իրականութեան մէջ, պէտք է փոխել միայն մէկ բան՝ մեր մտքերու բովանդակութիւնը, մեր խելքի բնոյթը:

Միշտ լոյս դրէք ու յենուեցէք մտքի երջանիկ վիճակին վրայ... Թող ատիկա դառնայ ձեր կեանքի ամենաանկիւնաքարային օրէնքներէն մէկը: Նոյնիսկ որեւէ ժխտական բանի հետ բախելով՝ անոր մէջ որեւէ դրական բան գտէք: Եւ այն օրը, երբ դուք սորվիք ժխտականի մէջ դրականը գտնել, դուք ուրախութենէն պիտի պարէք:

# Կանանց Ձեռքերու Իւրայատկութիւնները, Որոնց Վրայ Տղամարդիկ Ուշադրութիւն կը Դարձնեն

Առաջին հանդիպման ընթացքին կանայք կ'աշխատին հիանալի տեսք ունենալ եւ ցոյց տալ միայն իրենց լաւ կողմերը:

Իւրաքանչիւր աղջիկ կը ձգտի, որ նոյնիսկ մանրուքները մտածուած եւ գեղեցիկ ըլլան: Իսկ ի՞նչ կը պատմեն անոր ձեռքերը տղամարդոց.

Զարդեր: Զարդերը բաւական շատ տեղեկութիւն կրնան տալ կնոջ մասին: Այն, թէ արդեօք ան կը կրէ՞ մատանիներ եւ ո՞ր մատներուն վրայ, ոսկի՞ են անոնք, թէ՞ արծաթ: Ի հարկէ, առաջին հերթին, ինչպէս կիները, տղամարդիկ ուշադրութիւն կը դարձնեն՝ արդեօք կինը կը կրէ՞ ամուսնական մատանի, թէ՞ ոչ:

Ձեռքերու ուժը: Կանանց ձեռքերուն ուժգնութիւնը նոյնպէս շատ կարեւոր է տղամարդոց համար: Միմեանց ձեռքերը սեղմելով՝ տղամարդը կրնայ հասկնալ, որ կինը ինչպէս կը դրսեւորէ ինքզինք յարաբերութիւններու մէջ:

Կանացիութիւն: Եթէ կինը ունի տղամարդկային կոպիտ ձեռքեր՝ ուստի պէտք չէ յուսահատիլ:

Այդպիսի ձեռքեր ունեցող կանայք կը համարուին յուսալի զուգընկեր յարաբերութիւններու մէջ: Այդպիսի մարդիկ չեն վախնար աշխատանքէն, բարի են եւ հաւասարակշռուած: Եղունգներու խնամք: Տղամարդիկ մեծ ուշադրութիւն կը դարձնեն կիներու եղունգներու յարդարման, քանի որ անիկա կրնայ պատմել, թէ ինչպէս կինը կը խնամէ ինքն իրեն: Չխնամուած եղունգները կը վանեն տղամարդոց:

Տարիք: Ձեռքերը եւ պարանոցը կը մատնեն կնոջ տարիքը: Եթէ ձեզի համար կարեւոր է երիտասարդ տեսք ունենալը, ուստի պէտք է խնամել ձեռքերուն մաշկը:

# Ի՞նչպէս Վերահսկել Երազները ու Նուազեցնել Ճնշախտը

-Գիտնականներու կարծիքով՝ կարելի է «կառուցել» երազները սեփական ցանկութիւններուն համապատասխան: Պարզապէս պէտք է փորձել պատկերացնել ցանկալի գեղեցիկ պահերը այնպէս, կարծես անոնք իրական են:

Քնացած ժամանակ ուշադրութեան կեդրոնացում մը կ'օգնէ մարդոց աւելի երջանիկ զգալու:

Անիկա կրնայ զգալիօրէն նուազեցնել ճնշախտը եւ անհանգստութիւնը, որոնք կը կուտակուին օրուան ընթացքին: Աւելին, ապացուցուած է, որ արուեստագէտները շատ յաճախ կ'ոգեշնչուին իրենց երազներէն:

Իսկ «գիտակցուած» երազներ տեսնելու համար պէտք է ընդամէնը օրուան ընթացքին պատկերացնել այդ տեսարանը կամ երազը, զոր կ'ուզէք տեսնել գիշերը: Այս երեւոյթը յայտնի է «երազանքի թխում» անունով, եւ անոր հիմնական իմաստը ցանկութիւններու նիւթականացումն է:

Եթէ կ'ուզէք որոշ խնդիր լուծել երազի մէջ, ուստի պէտք է մտածել անոր մասին անմիջապէս քնանալէն առաջ: Ատիկա պէտք է ըլլայ վերջին միտքը, որուն մասին կը մտածէք: Օրինակ, եթէ անձնական խնդիր է, ուստի պէտք է քնանալէ առաջ մտածել այն անձին մասին, որուն հետ խնդրայարոյց յարաբերութիւններու մէջ էք:

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

## «Լիվերպուլի» Կամային Յաղթանակն ու Առաջին Տեղը

Անգլիայի առաջնութեան 33-րդ տուրի խաղում «Լիվերպուլը» հիւրընկալուեց «Սաութհեմփթոնին» եւ տարաւ կամային յաղթանակ 1:3 հաշուով:

Գերմանացի Յուրգեն Կլոպի գլխաւորած թիմը կոլ բաց թողեց արդէն 9-րդ րոպէին, սակայն յետոյ կարողացաւ պատասխանել երեք կոլով:

«Լիվերպուլը» 82 միաւորով բարձրացաւ առաջին տեղ, սակայն 80 միաւոր ունեցող «Մանչեսթեր Սիթին» մէկ հանդիպում քիչ է անցկացրել: «Սաութհեմփթոնը» 16-րդն է՝ 33 միաւոր:

## «Արսենալը» Պարտուեց «Էվերտոնին», Մխիթարեանը Մասնակցեց Ամբողջ Խաղին

Լոնտոնի «Արսենալը» Անգլիայի Պրեմիեր լիգայի 33-րդ տուրում հիւրընկալուելիս 0:1 հաշուով պարտուեց Լիվերպուլի «Էվերտոնին»: Միակ կոլը խաղի 10-րդ րոպէին խփեց Ֆիլ Ջագելկան:

Հայաստանի հաւաքականի աւագ Հենրիխ Մխիթարեանը ընդգրկուել էր «Արսենալի» մեկնարկային կազմում եւ մասնակցեց ամբողջ խաղին:

«Արսենալն» առաջին պարտութիւնը կրեց վերջին եօթ տուրերում եւ վաստակած 63 միաւորով մնաց 4-րդ հորիզոնականում: «Էվերտոնը» երրորդ անընդմէջ յաղթանակը տօնեց առաջնութիւնում եւ այժմ 46 միաւորով զբաղեցնում է 9-րդ տեղը:

## «Բաւարիա» - «Բորուսիա Դորտմունդ»՝ 5:0



Գերմանիայի առաջնութեան երկրորդ շրջանի կեդրոնական խաղում ախոյեան «Բաւարիան» տանը մրցեց առաջատար Դորտմունդի «Բորուսիայի» հետ եւ առաւելութեան հասաւ 5:0 հաշուով:

Խորվաթ Նիկօ Կովաչի գլխաւորած թիմը հանդիպման ելքը վճռեց արդէն առաջին խաղակէսում: Գերմանացի Մատս Հումելսը, լեհ Ռոբերտ Լեւանդովսկին, իսպանացի Խաւի Մարտինեսը եւ գերմանացի Սերժ Գնաբրին գրաւեցին Ռոման Բյուրկիի պաշտպանած դարպասը: Հիմնական ժամանակի նախավերջին րոպէին Լեւանդովսկին նաեւ դուբլ ձեւակերպեց:

«Բաւարիան» 64 միաւորով բարձրացաւ առաջին տեղ, «Բորուսիան» նահանջեց երկրորդ տեղ՝ 63 միաւոր:

## «Եուվենտուսը» Յաղթեց «Միլանին» եւ Գործնականում Ապահովեց Տիտղոսը

Իտալիայի առաջնութեան 31-րդ տուրի կեդրոնական խաղում ախոյեան Թուրինի «Եուվենտուսը» տանը մրցեց «Միլանի» հետ եւ տարաւ կամային յաղթանակ 2:1 հաշուով՝ գործնականում պաշտպանելով տիտղոսը:

Հիւրերը հանդիպման հաշիւը բացեցին 39-րդ րոպէին լեհ յարձակուող Կշիշոֆ Պյոնտեկի կոլի շնորհիւ: Մասիմիլիանօ Ալեգրիի գլխաւորած թիմը պատասխան կոլը խփեց երկրորդ խաղակէսում: 11 մեթրանոցը դիպուկ իրացրել արժենթինացի յարձակուող Պաուլօ Դիբալան:

«Եուվենտուսի» յաղթական գոլը խփեց Իտալիայի հաւաքականի յարձակուող Մոյզե Քինը, որը փոխարինել էր Դիբալային:

«Եուվենտուսը» 84 միաւորով առաջին տեղում է եւ արդէն 21 միաւոր առաջ է երկրորդ տեղում ընթացող «Նապոլիից», որը մէկ հանդիպում քիչ է անցկացրել: «Միլանը» չորրորդն է՝ 53 միաւոր: Եթէ «Նապոլին» Ապրիլի 7-ին պարտուի «Ջենոային», «Եուվենտուսը» 7 տուր առաջ կ'ապահովի ախոյեանի տիտղոսը:

## «Բարսելոնան» Ցմահ Պայմանագիր Կ'առաջարկի Մեսսիին

«Բարսելոնան» կը սկսի բանակցութիւններ արժենթինացի յարձակուող Լիոնել Մեսսիի հետ ցմահ պայմանագիր կնքելու հարցով: Այդ մասին յայտնել է կատալոնական ակումբի նախագահ Խոսեպ Մարիա Բարտոմեուն:

«Մենք ցանկանում ենք երկարաձգել պայմանագիրը Մեսսիի հետ: Նա դեռ երիտասարդ է եւ դեռ երկու տարի ունի գործող պայմանագրով: Նա միշտ կատարելագործւում եւ զարգանում է:

Ես հաւատում եմ, որ նա դեռ երկար տարիներ հանդէս կը գայ: Առաջիկայ ամիսներին մենք կը բանակցենք նրա հետ, որպէսզի նա կարիերայի մնացած տարիներն էլ անցկացնի «Բարսելոնայում»:

Մեսսին մէկ ակումբի խաղացող է: Նա աւելին է անում մեզ համար, քան խաղադաշտում հանդէս գալը: Նրա յարաբերութիւնները «Բարսելոնայի» հետ կը լինեն յաւերժ: Մենք ցանկանում ենք, որ նա միշտ լինի «Բարսելոնայում»՝ խաղացողի կարգավիճակում կամ այլ պաշտօնում»,- Բարտոմեուի խօսքը մէջբերում է ESPN-ը:

## ՄԼՍ. Դիեգօ Մարաշլեանի Հեթ-Տրիկը



ՄԼՍ-ի առաջնութեան հերթական տուրում «Լոս Անճելոսը» մրցել է «Դի Սի Եունայթեդի» հետ եւ յաղթանակ է տարել 21-ամեայ ուրուգուաhայ յարձակուող Դիեգօ Ռոսի Մարաշլեանի հեթ-տրիկի եւ Կարլոս Վելայի կոլի շնորհիւ՝ 4:0:

«Դի Սի Եունայթեդի» կազմում 52-րդ րոպէին կոպիտ սահանկման պատճառով հեռացուել է անգլիացի յարձակուող Ուէյն Ռունին:

Մարաշլեանն ընթացիկ առաջնութեան 6 խաղում խփել է 6 կոլ: «Լոս Անճելոսը» 16 միաւորով Արեւմուտքի առաջատարն է:

## Դիեգօ Կոստային Սպառնում է Որակազրկում Մինչեւ Մրցաշրջանի Աւարտը



Մադրիդի «Աթլետիկոյի» սպանացի յարձակուող Դիեգօ Կոստային սպառնում է որակազրկում 8 խաղով Սպանիայի առաջնութիւնում: Պրիմերայի 31-րդ տուրում «Աթլետիկոն» 0:2 հաշուով պարտուել էր «Բարսելոնային», իսկ Կոստան հեռացուել էր արդէն 28-րդ րոպէին մրցավար Խեսուս Խիլ Մանսանոյին հայհոյելու համար: Այդ մասին նշուել էր հանդիպման արձանագրութիւնում: Ֆուտպոլիստը խաղից յետոյ հերքել է, թէ հայհոյել է մրցավարին:

Այժմ Կոստային սպառնում է 4 խաղի որակազրկում մրցավարին հայհոյելու, եւս 4 հանդիպման որակազրկում կարմիր քարտ ստանալուց յետոյ մրցավարին ձեռքերով բռնելու համար:

Սպանիայի առաջնութեան աւարտին մնացել է 7 տուր: «Բարսելոնան» 73 միաւորով առաջինն է: «Աթլետիկոն» ունի 62, «Ռեալը»՝ 60 միաւոր:

## «Մանչեսթեր Եունայթեդը» Պատրաստ է Պոգբային Փոխանակել Վարանի եւ Բեյլի Հետ



Անգլիական «Մանչեսթեր Եունայթեդը» պատրաստ է կիսապաշտպան Պոլ Պոգբային փոխանակել Մադրիդի «Ռեալի» ֆրանսացի պաշտպան Ռաֆայէլ Վարանի եւ ուելսցի յարձակուող Գարեթ Բեյլի հետ, եթէ ֆրանսացի կիսապաշտպանը որոշի տեղափոխուել Արքայական ակումբ, հաղորդում է Marca-ն:

Պոգբան մտադրութիւն ունի փոխել ակումբը եւ աշխատել ֆրանսացի Զինեդին Զիդանի հետ, որը եւս հետաքրքրուած է ֆուտպոլիստի ծառայութիւններով եւ յայտարարել էր, որ «Ռեալը» ձեռք կը բերի Պոգբային, եթէ այդպիսի հնարաւորութիւն յառաջանայ:

26-ամեայ Պոգբան «Մանչեսթեր Եունայթեդ» է տեղափոխուել 2016-ին «Եուվենտուսից» 105 միլիոն եւրոյով:

## Արթուր Վանեցեան. Հաւաքականի Մարզիչի Փոփոխութիւն Այս Պահին Չենք Նախատեսում

Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիայի նախագահ Արթուր Վանեցեանը այս պահին ազգային հաւաքականի գլխաւոր մարզիչի փոփոխութեան անհրաժեշտութիւն չի տեսնում: Արմէն Գիւլբուդաղեանցը կը շարունակի աշխատանքը: Այդ մասին Արթուր Վանեցեանն ասել է Երեւանի Եւրոպայի հրապարակում տեղի ունեցած Եւրոպայի մինչեւ 19 տարեկանների առաջնութեան եզրափակիչ մրցաշարի մեկնարկից առաջ 100 օրուայ հետհաշուարկի ժամացոյցի բացմանը:

Յիշեցնենք, որ Յուլիսի 14-ից 27-ը կայանալիք մրցաշարում Հայաստանի մրցակիցները կը լինեն Ֆրանսայի, Իտալիայի, Սպանիայի, Պորտուգալիայի, Չեխիայի, Նորվեգիայի եւ Իռլանդիայի Մ-19 հաւաքականները:

Եւրոպայի առաջնութեան խաղերն անցկացուելու են Երեւանի «Հանրապետական» ստադիոնում, Աւանի ֆուտպոլային ակադեմիայում եւ «Բանանց» մարզադաշտում:

---

Ընթացիկ մրցաշրջանում Մեսսին «Բարսելոնայի» կազմում մասնակցել է 39 հանդիպման, խփել 42 կոլ, կատարել 21 կոլային փոխանցում:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

# «Դրութեան Մէջ Մտնող» Բժիշկը

Շարունակուած էջ 14-էն

*արժանի ձեւով...:*

*Ուրիշին իրաւունքները ոտնակոխողներուն եւ օրէնքը աջ ու ձախ խախտելով՝ օրինապահներն ալ իշու տեղ դնողներուն հանդէպ նոյնքան զզուանք զգացող ընկերոջ մը երբ կը պատմէի այդ վհուկին մասին, «Վռա՛մ», ըսաւ, «մեղաւորը միայն ի՛նքը չէ. բուն մեղաւորը իրեն համար հաշմանդամի տեղեկագիր գրած բժի՛շկն է»: Զարմանքիս իբրեւ պատասխան՝ մէկ շունչով սկսաւ շարել անունները մեր համայնքին մէջ «վաստակ ունեցող» բժիշկներու, որոնք «հռչակաւոր» են նաեւ այդ գեղծարարութեան մէջ: Չորրորդ անունէն ետք, «լաւ, եղբա՛յր, լաւ. կը բաւէ՛», ըսի: ՄԱՐԴկութեան հանդէպ հաւատքս բոլորովին մի՛ քանդէր»:*

*Միեւնոյն օրը որոշեցի գրել այս մասին, սակայն կամքէ անկախ պատճառներով, եւ հիմա կ՛անդրադառնամ որ շատ հաւանաբար նախախնամութեան միջամտութեամբ՝ յետաձգուեցաւ այս յօդուածին ծնունդը:*

*Քանի մը օր առաջ, հաշուապահ ծանօթի մը հետ կը գրուցէի իր գրասենեակի շէնքին կանքառին մէջ, երբ 2019 թուականի, տակաւին վաճառատան ազդագիրը կրող Պի. Էմ. Տապլեու. (Bavarian Motor Works) էքս 7 մակնիշի ինքնաշարժ մը արշաւեց կանքառին տարածքէն ներս եւ գրաւեց հաշմադամներուն համար նշանակուած միակ տեղը: Անմեղութեան խորհրդանիշ ճերմակ գոյնով պարուրուած այս ինքնաշարժին ալ ապակիները սեւցած էին: Երբ տակաւին կը մտածէի «այս ի՛նչ հաշմանդամ է որ կրցաւ այդքան արագ ապատակելով հանդերձ անմիջապէս հանգչեցնել այդ կատղած գազանը, առանց նոյնիսկ տեղ փնտռելու, կարծէք իր պապո՛ւն տեղը ըլլար...», դուռը բացուեցաւ եւ ...ո՜վ հրաշք. դուրս թռաւ ֆիզիքապէս անթերի, «բուժքոյր»ի համազգեստով, 25-30 տարեկան թուացող փոքրամարմին իգական մը: Հաշմանդամի Ազդագիրը հայելիին բռնիչէն արագ կախեց, «լանչից ուշացել եմ» շպրտեց հաշուապահին նայելով եւ սուրաց շէնքէն ներս: Ես շշմած էի: «Բժիշկին գլխաւոր օգնականն է», ըսաւ գրուցակիցս, գլուխը ուղղելով դէպի շէնքին երկրորդ յարկը: «Բայց ասոր ո՞րտեղը հաշմանդամ է», հարցուցի. լիաթոք քահ-քահքահէն պահ մը հազիւ շունչ առնելով՝ «իրե՛ն հարցնէիր» ըսաւ խորամանկ խօսակիցս: Խե՞նթ էի: Մանկամարդ հայ օրիորդներու քանի՞ մատին պէտք էր արժանանայի որպէսզի համոզուէի որ ինչ որ տեղ -երեւի՝ քիչ մը ամէն տեղ- բարոյազուրկերով ողողուած է մեր համայնքը: Եթէ մարդիկ բժշկելու,- այսինքն անոնց մասին մտահոգուելու, անոնց առողջութեան համար գործելու եւ ի վերջոյ՝ անոնց հոգեֆիզիքական կազդուրման (եւ անշուշտ իրենց սեփական նիւթական ապահովութեան) համար ա՛յս ասպարէզ-առաքելութիւնը ընտրած մը կրնայ ինքն իրեն արտօնել, բացէ ի բաց, օր ցերեկով բռնաբարել հաշմանդամի մը իրաւունքը իր «լանչից ուշանալ»ուն եւ կամ որեւէ այլ պատճառով՝ դեռ ի՞նչ կը փնտռենք այս մարդանման բայց տմարդի արարածներուն մէջ:*

*Հաշուապահը երեւի սկսած էր կարդալ միտքս, «յաճախ կ՛ուշանայ գործի. ատոր համար ալ՝ իր սեփական տեղը եղած է հաշմանդամի այս տարածքը», ըսաւ. «եւ ամէնէն ցաւալին այն է, որ այդ փլաք-ը բժիշկին միջոցով ստացեր է»: «Վա՜յ, բժիշկ կոչուած, ես քու...» մրմրթացի, մնացեալը մտքէս շարունակելով: Եթէ սա նողկանք չէ, հապա ի՞նչ է: Հայանուն նման արարածներ ո՞ր մոլորակի ծնունդ են, դեռ ինչքա՞ն պիտի փճացնեն մեր արժանիքները, մինչեւ ե՞րբ պիտի բռնաբարեն ու ոտնակոխեն մեր ազգային արժանապատւութիւնը, այս հոգեմտաւոր բոպիկութեան վերջը ո՞ւր է. եւ ո՞վ պիտի համարձակի մաքրել մեզ՝ մեզմէ...:*

*Մտքիս թելը կտրեց խօսակիցս, իր «գիտե՞ս բժիշկը ով է» հարցումով: «Ի՞նչ տարբերութիւն պիտի ընէ բացի անկէ որ գիս հաւանաբար աւելի յուսախաբ ընես», ըսի. «(Այսինչ)-եանն է», ըսաւ, աւետիս յայտնողի մը պէս ժպիտը երեսին: «Այս արարածները ամօթ չունի՞ն», ընդվզեցայ: Իբրեւ պատասխան, գրուցակիցս յայտնեց որ անգամ մը համարձակեր է համայնքին մէջ հռչակ ձեռք բերած մեր բժիշկին գլխաւոր օգնականին հարցնել թէ ինչպէ՞ս «արժանացեր է» հաշմանդամի իրաւասութեան, եւ պատասխանը եղեր է՝ «բժիշկը մտաւ դրութեանս մէջ եւ րիփորդ տուեց որ Տի. Էմ. Վի. տանեմ. նրանք էլ օքէյ տուին»: «Բժիշկը իր ինչի՞ն մէջ մտեր է ըսաւ», հարցուցի հեգնական: Հաշուապահին բարձրաձայն ծիծաղը ընդհատուեցաւ հեռախօսազանգով. մինչ ինք ենթադրաբար յաճախորդի մը հարցումներուն կը պատասխանէր, ինքնաշարժը քանի մը կողմերէ նկարեցի, առանց մոռնալու Հաշմանդամի Ազդագիրը եւ ինքնաշարժին թիւը, ձեռքի շարժումով ցտեսութիւն յայտնեցի եւ ուղղուեցայ դէպի ինքնաշարժս: Հեռաձայնեցի քաղաքի ոստիկանութիւն որպէսզի մէկը ղրկէին այդ շէնքին կանքառին մէջ հաշմանդամին իրաւունքը բռնաբարող օրիորդին «դրութեան մէջ», առնուազն, կլորիկ տուգանք մը տեղաւորելու:*

***

*Սիրելի՛ ընթերցող, պետական տուեալներու համաձայն, Հաշմանդամի Ազդագիր ունեցող կամ ցուցադրող վարորդներուն մէկ-երրորդը գեղծարարութեամբ ստացած է եւ կը շահագործէ այդ ազդագիրը: Որպէս ՄԱՐԴ արարածներ մեր պարտականութիւնն է պաշտպանել մեզմէ տկարին կամ անկարին իրաւունքները, առանց սպասելու որ պետութեան այս կամ այն բաժանմունքը այդ ընէ: Մենք եւս մեր բաժինն ու պատասխանատուութիւնը ունինք:*

*Երբականատես կ՛ըլլաք նման պարագաներու, հաճեցէք տեղեկացնել քաղաքի ոստիկանութեան կամ՝ Ինքնաշարժներու Վարչութեան (Տի. Էմ. Վի.ին), Լոս Անճելըս գաւառի պարագային հեռաձայնելով (213) 744-7591 թիւին: Նմանխախտումներու հեղինակները կը տուգանուին 250-էն մինչեւ 1,000 տոլար, եւ մինչեւ 6 ամիս բանտարկութեան կրնան ենթարկուիլ:*

*Եւ վերջապէս, զգուշացում բոլոր անոնց որոնք իրաւացի կերպով ունին Հաշմանդամի*

*Ազդագիր. եթէ այդ ազդագիրը ինքնաշարժի հայելիի կախիչին վրայ դրած կը վարէք ձեր ինքնաշարժը՝ կրնաք դո՛ւք եւս տուգանուիլ երթեւեկութեան օրէնքը խախտելու պատճառով: Այդ ազդագիրը կրնայ ոստիկանին կողմէ նկատուիլ իբրեւ ձեր տեսադաշտը փակող առարկայ:*

# Ամերիկահայ Քանդակագործի Ամբողջական Հաւաքածուն Հանգրուանում է Հայրենիքում

Շարունակուած էջ 13-էն

*գիքականի, մտաւորի եւ հոգեւորի մի ամբողջութիւն է: Քանդակը պէտք է դիտել բոլոր կողմերից. այն պէտք է լինի գեղեցիկ, հաւասարակշռուած եւ ազդեցիկ: Այն ինձ համար բոյսի պէս է, որ ծլելով, աճելով, ծաղկելով կեանք է մտնում: Արուեստը պէտք է ունենայ զգացմունքային յատկութիւն, սակայն այն կը ստանայ հոգեւոր որակ միայն այն ժամանակ, երբ միտքն իշխի զգացմունքներին»:*

***

*«Ամբողջ կեանքիս ընթացքին գիս յուզած է եղեռնը եւ հակառակ անոր, որ քանի անգամներ անդրադարձած եմ եղեռական անցքերուն, սակայն ուզած եմ արժանի յուշարձան մը կանգնեցնել»:*

Արուեստագէտները
Խորէն Տէր-Յարութեանի մասին

*«Եթէ Ձեր աչքերն ընդունակ են ընկալելու անկեղծ արուեստ, ապա դուք երբեք չէք մոռանայ այդ վարպետին, նոյնիսկ արագընթաց եռուզեռով լի մեր դարն ի վիճակի չէ պղտորել նրա գործերը, նուազեցնել նրանց հերոսականութիւնը: Մենք բախտաւոր ենք լինել նրա ժամանակակիցը, եւ ականատեսն այս հանճարի ստեղծագործութեան: Խորէն Տէր-Յարութեանն արուեստին նուիրեց իր կեանքը, փոխարէնը ստանալով յաւերժութիւն»:*

*Արուեստագէտ Անրի Ժեռար*

*Երուանդ Քոչարը շատ բարձր է գնահատել Խորէն Տէր-Յարութեանի արուեստը եւ ասել է*

*«Խորէն. խորէն է գալիս, այսինքն՝ խորքից է գալիս...»:*

Պապին Մուրադեանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչէ եւ Թամար Մանուկեան» Մատենադարանի փոխտնօրէն, Երեւանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի դասախօս



# Պատմական Հանդիպում Մը Հնդկաստանի Մէջ

Շարունակուած էջ 14-էն

նեց Հայոց Հայրապետին, Հնդկաստանին եւ Հնդիկ ժողովուրդին իր հասցէագրած ջերմ խօսքերուն համար եւ շեշտեց մեր օրերուն անհրաժեշտութիւնը հոգեկան լոյսի եւ մարդու հոգեկան արժէքներու զարգացման:

- Առանց հոգեկան լոյսի, ըսաւ նախագահը, մարդկութեան ապագան չի կրնար պայծառ ու ապահով ըլլալ: Ես կը հաւատամ, որ հոգեկան այդ լոյսը կը վերաժայթքի: Ինծի համար մեծ ուրախութիւն է տեսնել այսքան շատ հոգեւորականներ, որոնք կը քարոզեն լոյսը, կը քարոզեն խաղաղութիւնը եւ կը դաստիարակեն ժողովուրդը տիեզերական եղբայրութեան ոգիով:

Տեսակցութեան ընթացքին Տոքթ. Ռատաքրիշնան յայտնեց, որ ինք բաւական ծանօթ է հայ մշակոյթին, հայ ժողովուրդի եւ հայ եկեղեցւոյ պատմութեան: Նախագահը նշեց նաեւ, որ ինք շատ կը սիրէ հայ եկեղեցւոյ հոգեւոր երգերն ու շարականները եւ ամէն անգամ որ այցելէ Պարսկաստան, կիրակի օր անպայման ներկայ կը գտնուի Թեհրանի Հայոց եկեղեցւոյ արարողութիւններուն:

- Դուք, Պրն. Նախագահ, ըսաւ Վեհափառը, յաճախ կ'այցելէք Սովետ Միութիւն, բայց երբեք Հայաստան չէք եկած: Ձեր յաջորդ Մոսկուա այցելութեան, կը խնդրեմ, որ անպայման այցելէք նաեւ Հայաստան, որպէս իմ անձնական հիւրս:

- Վեհափառ Տէր, ըսաւ նախագահը, խօսք կու տամ ձեզի, իմ յաջորդ Մոսկուա այցելութեանս անպայման կ'այցելեմ նաեւ Հայաստան, որպէս Ձեր հիւրը:

Բաժանման պահուն Վեհափառ Հայրապետը իր շնորհակալութիւնը յայտնեց Հնդկաստանի Հանրապետութեան նախագահին այն բարեացակամ, ազնիւ եւ սիրալիր հոգածութեան համար, զոր Հնդկաստանի կառավարութիւնն ու ժողովուրդը դարերով ցուցաբերած է հնդկահայ գաղութին հանդէպ:

**Տեղեկագիր Վեհափառի Հնդկաստան այցելութեան մասին**

Վեհափառը դիմաւորելու համար նախքան Տելհի մեկնիլս, Կալկաթայի սովետական փոխհիւպատոսը խնդրանքով մը դիմեց ինծի.

- Պրն Կիւզելեան, ինչպէս գիտէք, Վազգէն կաթողիկոսը կարեւոր անձնաւորութիւն մըն է Սովետ Միութեան մէջ եւ մեր պարտականութիւնն է տեղեկագիր մը ներկայացնել Մոսկուայի պատկան մարմիններուն, Վեհափառի Հնդկաստան այցելութեան մասին:

Եթէ մեր պաշտօնեաներէն մէկը ընկերակցի Վեհափառին, պիտի ըսուի, որ KGB-ն կը հետեւի կաթողիկոսին: Խնդրանքս այն է, որ դուք տեղեկագիր մը պատրաստէք Վեհափառի այցելութեան մասին, քանի որ որպէս թարգման պիտի ուղեկցիք Նորին Սրբութեան իր շրջագայութեան ընթացքին:

Փոխհիւպատոսին առաջարկը արժանացաւ Վազգէն կաթողիկոսի հաւանութեան: Վեհափառի շրջագայութեան աւարտին, պատրաստած տեղեկագիրս նախքան փոխհիւպատոսին յանձնելը, Վեհափառին տուի, խնդրելով որ կարդայ զայն եւ ի պահանջել հարկին ընէ պէտք եղած փոփոխութիւնները:

Տեղեկագիրը կարդալէ յետոյ, յաջորդ օր, Վեհափառը կատակով ըսաւ.

- Ասատուր, այս տեղեկագրին հիման վրայ, Սովետ Միութիւնը ինծի խաղաղութեան շքանշան կու տայ...:

Տեղեկագիրը ողողած էի կրեմլի ականջին հաճելի արտայայտութիւններով, ինչպէս՝ «Ամէնուրեք Վեհափառը խօսեցաւ ժողովուրդներու եղբայրութեան ու բարեկամութեան մասին... Վեհափառը ընդգծեց Սովետական Միութեան կատարած դերին կարեւորութիւնը ժողովուրդներու միջեւ բարեկամութեան զարգացման ու ամրապնդման աշխատանքին մէջ...» եւ այլն...:

***

Տարի մը անց՝ 1964-ին, թերթերէն իմացայ, որ Տոքթ. Ռատաքրիշնան, յարգելով Վեհափառին տուած իր խոստումը, այցելած է Հայաստան:

Այցելութեան մանրամասնութիւնները, զորս Վեհափառը լսած էր Հնդկաստանի սովետական դեսպանէն, ինծի պատմեցին Վազգէն կաթողիկոսն ու զարմիկս՝ Ներսէս Վրդ. Պօղպալեանը:

Ուրեմն, երբ Տոքթ. Ռատաքրիշնան 1964-ին Սովետ Միութիւն կը հրաւիրուի, նախագահին կ'ընկերակցին Սովետ Միութեան Հնդկաստանի դեսպանն ու Հնդկաստանի Սովետական Միութեան դեսպանը: Օդանաւին մէջ նախագահը երկու դեսպաններուն կը հրահանգէ, որ իր յայտագրին մէջ անպայման ներառեն նաեւ Հայաստանը: Ան կը յիշեցնէ դեսպաններուն, որ ինք Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգէն Ա.-ին խոստացած է այցելել Հայաստան:

Մոսկուա հասնելէն օր մը յետոյ, նախագահը կը կանչէ երկու դեսպանները եւ կ'ուզէ իմանալ Հայաստան այցելութեան ծրագրի մանրամասնութիւնները:

Նախագահը, երբ կը զգայ որ Մասկուան կը փորձէ ձգձգել իր Հայաստան այցելութեան ծրագիրը, դեսպանները անգամ մը եւս քովը կը կանչէ եւ անոնց կու տայ հետեւեալ ազդարարութիւնը.

- Երկուքդ ալ վտարել կու տամ ձեր պաշտօնէն, եթէ ձախողի Հայաստան այցելութեանս ծրագիրը: Ես կեանքիս մէջ խոստումնադրուժ չեմ եղած. կ'ուզեմ ձեզի անգամ մը եւս յիշեցնել, որ ես Վազգէն կաթողիկոսին խօսք տուած եմ այցելել Հայաստան...:

Հաշուի առնելով ստեղծուած իրավիճակին լրջութիւնը, Մոսկուայի պատկան մարմինները իսկոյն կ'անցնին գործի: Կը խնդրեն Անաստաս Միկոյեանէն, որ ընկերակցի նախագահին: Երբ կամքէ անկախ պատճառներով Միկոյեան չի կրնար ընդառաջել եղած խնդրանքին, կրեմլի կարեւոր պաշտօնակատարներէն մէկուն կը վստահուի այդ պարտականութիւնը:

Մոսկուան Հայաստանի իշխանութիւններուն կը յայտնէ եղելութիւնը եւ կը հաստատէ, որ Հնդկաստանի նախագահը չորս ժամ յետոյ կը հասնի Երեւան, «որպէս Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգէն Ա.-ի հիւրը»: Հրահանգ կը տրուի Երեւանի իշխանութիւններուն, որպէսզի ապահովեն Վեհափառին ներկայութիւնը օդակայանին մէջ, որպէս «հիւրընկալ»: Կացութիւնը կը բարդանայ, երբ կը պարզըւի, որ Վեհափառը Էջմիածինէն կը բացակայի եւ ոչ ոք գիտէ անոր ուր գտնուիլը: Ներսէս Վրդ. Պօղպալեան դիտել կու տայ, որ Վեհափառը երբեմն կ'երթայ Բիւրականի իր ամարանոցը քանի մը օր ինքնամփոփուելու եւ հսկում ընելու համար:

Բիւրականի տեղական իշխանութիւնները Վեհափառը կը գտնեն իր ամարանոցին մէջ եւ անմիջապէս կ'առաջնորդեն «Զուարթնոց» օդակայանը: Երբ Վեհափառին ինքնաշարժը «Զուարթնոց» կը հասնի, նոյն պահուն նախագահին ինքնաթիռն ալ վայրէջք կը կատարէ: Նախագահը երբ պատուոյ պատուանդանէն կը տեսնէ Վեհափառը, կ'ողջունէ զայն եւ կ'ըսէ.

- Վեհափառ Տէր, խոստումս յարգեցի, չէ՞...:

Վազգէն կաթողիկոսի եւ Հնդկաստանի նախագահի հանդիպման նուիրուած այս յօդուածը կ'ուզեմ աւարտել սոյն պատմութեան հետ հեռաւոր առնչութիւն ունեցող եւս մէկ եղելութեան հետ, որ անջնջելի տպաւորութիւն ձգած է վրաս:

1968-ին, Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի հրաւէրով կը գտնուիմ Հայաստան, մասնակցելու Երեւանի 2750-ամեակի տօնակատարութիւններուն: Պետութիւնը, ի պատիւ պատգամաւորներուն, ընդունելութիւն մը կազմակերպած է, որուն հրաւիրուած է շուրջ 1500 անձ: Բացի պատուոյ սեղանին նստած հիւրերէն, հանդիսութեան միւս մասնակիցներուն աթոռ կամ նստելու յարմարութիւն չէ տրամադրուած:

Ընդունելութեան ներկայ են նաեւ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգէն Ա.ը եւ ծերունազարդ գրող Մարիէթա Շահինեանը: Մատուցողները երկու աթոռ բերին, մէկը՝ Վեհափառին, իսկ միւսը՝ Մարիէթա Շահինեանին համար: Տեղին է նշել, որ այդ տարիներուն կաթողիկոսը պատուոյ սեղան չէին հրաւիրեր:

- Քովս կանգնիր, Ասատուր, կը զրուցենք, ըսաւ Վեհափառը:

Կէս ժամ անց, օրուան հանդիսավարը հետեւեալ յայտարարութիւնը ըրաւ.

- Ուրախ ենք յայտնելու, որ վերջերս Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգէն Ա. Հայրապետը արժանացաւ «Խաղաղութեան Պաշտպանութեան Սովետական Կոմիտէի Ոսկի Մետալ»ին: Բուռն ծափահարութիւններ...:

Վեհափառը հաճելի ժպիտով մը նայեցաւ ինծի եւ ըսաւ.

- Ասատուր, քեզի չըսի՞, որ պատրաստած տեղեկագրիդ հիման վրայ ինծի խաղաղութեան շքանշան կու տան...: Պահ մը յետոյ նկատեցի, որ պատուոյ սեղանէն առանձնացաւ զինուորական մը, համազգեստը ամբողջութեամբ շքանշաններով զարդարուած, մօտեցաւ Վեհափառին եւ ըսաւ.

- Վեհափառ Տէր, կը շնորհաւորեմ ձեր խաղաղութեան ոսկէ մետալը:

- Ես ալ կը շնորհաւորեմ ձեր եւ մեր Երեւանի 2750-ամեակը, պատասխանեց Վեհափառը:

- Վեհափառ Տէր, Աստուած մի արասցէ, եթէ թշնամին նորից յարձակի մեր երկրին վրայ, առաջին հերթին ես իմ հրասայլերը կը շարեմ Էջմիածնի պատերի շուրջ, որ ոչ մի գնդակ չկպչի այդ սրբազան քարերին, ըսաւ անծանօթ զինուորականը մաքուր հայերէնով, աչքերը երկինք յառած...:

Ամբողջ մարմնով փշաքաղուած էի, երբ Վեհափառը ծանօթացուց զիս այդ խօսքերու հեղինակին.

- Ծանօթացէք Մարշալ Պապաճանեանին: Երբ սեղմեցի հայրենասէր Մարշալին ձեռքը եւ յայտնեցի ուրախութիւնս, Վեհափառը զիս ներկայացուց Պապաճանեանին, որպէս «հայ ժողովուրդի եւ Հայաստանեայց եկեղեցւոյ նուիրեալ զաւակներէն մէկը»: Երբ Մարշալը հեռացաւ, Վեհափառը ըսաւ.

- Ասատուր, ասկէ աւելի զօրաւոր հայրենասիրական պոռթկում լսա՞ծ էիր:

- Ոչ, Վեհափառ:

- Եւ արտասահմանի մէջ շատերու մօտ այն կարծիքը կայ, որ Հայաստանի մեր ղեկավարները հայրենասէր չեն, ըսաւ Վեհափառը:

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles



Հետաքրքրուած ենք իրենց փոխարժէքով ստանալ՝
• Հայկական երգարաններ
• Կիլիկիոյ պատմական գիրքեր
• Ցեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք նման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել հեռաձայնելով՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻն:



Նոր Գիրքերու
Տպագրութեան
եւ Հին Գիրքերու
Նորոգութեան

Vahe Atchabahian
2004 E. Washington Blvd. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com


Հանրակառքերը պիտի մեկնին
կէսօրուան ժամը 12-ին
Կլենտէյլէն
Պըրպենքէն
Լա Քրեսէնթա / Թահանկաէն
Փասատինաէն
Մոնթեպելլոէն
Հոլիվուտէն
Նորթ Հոլիվուտէն
Նորթ Հիլզէն
Էնսինոէն
Քանոկա Փարք / Վան Նայզէն
Փոխադրամիջոցներ ապահովելու եւ յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնեցէք (888) 924-1915 թիւին:
ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՔԱՅԼԱՐՇԱՒ
ԱՊՐԻԼ 24
ՄԻԱՍԻ՛Ն ՔԱՅԼԵ՛ՆՔ
ԹՐՔԱԿԱՆ ՀԻՒՊԱՏՈՍԱՐԱՆ | ԺԱՄԸ 1-ԻՆ
6300 WILSHIRE BLVD , LOS ANGELES, CA 90048
FOR MORE INFORMATION VISIT WWW.MARCH4JUSTICE.COM | ARMENIAN GENOCIDE COMMITTEE
NALSA
WWW.MARCH4JUSTICE.COM | 888 924 1915